

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



Colony  
Pleasantland







ԳԵՂՈՐԳ ԲԱՇԻՆՁԱԳՅԱՆ

Գործ՝ Փ. Թերեմեղյանի

Ե  
1717

ՎԱՆՐԱՄ ԳԱՅՏԵՋՅԱՆ  
ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրեցի  
Քաջիգեղյան

---

Հայրերի  
երեմյա  
1957

В. ГАЙФЕДЖЯН, А. САРКСЯН

Г. БАШИНДЖАГЯН

(На армянском языке)

Армянское государственное издательство

(Айпетрат), Ереван, 1957

Խմբագիր՝ Հ. Գալստյան, նկարիչ՝ Ան. Գասպարյան,  
տեխ. խմբագիր՝ Է. Ճանեապոնյան, վերստուգող սրբագրիչ՝ Լ. Մկրտչյան:

ՎՋ 08460:

Պատվեր 1735:

Տիրաժ 3000:

Հանձնված է արտադրության 28/VIII 1957 թ.:

Ստորագրված է տպագրության 6/IX 1957 թ.:

Թուղթ՝ 70×92/16, տպագր. 2,5 մամ., հրատ 2,0 մամ. + 8 ներդիր:

Գինը կազմում է 2 ու. 70 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբե-  
րության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

Նշանավոր նկարիչ, հայ ռեալիստական պեյզաժի հիմնադիր, տա-  
ղանդավոր արվեստագետ Գևորգ Բաշինջաղյանը պատկանում է այն մե-  
ծանուն մարդկանց շարքին, որոնց հասարակական գործունեությունն ու  
ստեղծագործությունը, լինելով լայնորեն ժողովրդական ու դեմոկրատա-  
կան, ապրում են հավետ, քանի ապրում և ստեղծագործում է ինքը՝ ժո-  
ղովուրդը:

Մեծանուն արվեստագետը իր կյանքի 68 տարիները նվիրել է ժո-  
ղովրդի կուլտուրական գանձարանը հարստացնելու ազնիվ նպատակ-  
ներին: Նրա գործունեությունը չի սահմանափակվել միայն նկարչու-  
թյամբ. նա եղել է հասարակական գործիչ, արձագանքել է այն ամենին,  
ինչ բարձրացնում է ժողովրդի կուլտուրան: Բաշինջաղյանը խորապես  
կապված է եղել ուսու դեմոկրատ մտածողների, նկարչության մեջ՝ ուս-  
սական իդեալական ռեալիզմի ներկայացուցիչների՝ չափերգվիժնիկների  
գաղափարախոսության հետ, հանդիսացել է մեր կուլտուրայի դեմոկրա-  
տական թևի ցայտուն ներկայացուցիչներից մեկը: Նրա գործունեության  
և ստեղծագործության հիմքը կազմել են ժամանակի առաջավոր գաղա-  
փարները, ժողովրդական լայն զանգվածների իդեերն ու նպատակները,  
վառ հայրենասիրությունն ու ինտերնացիոնալ զգացմունքը, որն ամ-  
րացնում և զորում է ժողովուրդներին՝ մեծ նպատակների իրականաց-  
ման համար:

Գևորգ Բաշինջաղյանի բազմակողմանի, հարուստ և բարձր արվեստը  
իր կենսահաստատ ռեալիզմով, ժողովրդական լայն խավերին հասկա-  
նալի պարզությամբ, մինչև ուղղուցիտ շրջանից ստացած լավագույն և  
բարձրարժեք ժառանգություններից մեկն է:

\*\*\*

Գևորգ Բաշինջաղյանը ծնվել է Վրաստանի Սղնախ գավառական քաղաքում, 1857 թվականի սեպտեմբերի 16-ին: Նրա հայրը՝ Զաքարեն, ունեցել է զգալի բանաստեղծական ձիրք և հաճախ իր ազատ ժամերը նվիրել է գրականությանը: Նկարիչը երկար տարիներ պահպանել է հոր գրած բանաստեղծություններից շատերը: Մինչև այժմ էլ մնացել է մի հաստ տետր, որտեղ մի շարք երեսների վրա գրված են նրա բանաստեղծությունները: Այդ տետրում, 12-ամյա Գևորգը հոր մահից հետո, զանազան տեղերում կատարում է իր սկզբնական նկարչական վարժությունները, հոր գրած բանաստեղծությունների կողքին նկարելով ժողովրդական դուցազներգությունից վերցրած դրվագներ:

Դեռ հոր կենդանության ժամանակ, երբ նրան առաջին անգամ տանում են Սղնախի գավառական դպրոցը ուսանելու, հակառակ հոր խրատներին, Գևորգն առաջին օրը ևեթ խորամանկությամբ փախչում է դպրոցից, վերադառնում տուն և սկսում պարապել նկարչությանը:

Հայրն իր որդուն նորից տանում է դպրոց, սակայն երկրորդ փորձը դարձյալ տխուր վախճան է ունենում: Այսպիսով, Գևորգը գավառական դպրոցը լրիվ չի ավարտում, երրորդ դասարանից դուրս է գալիս և ամբողջովին տարվում նկարչությանը: Սակայն հոր տետրի սակավաթիվ էջերը այլևս նրան չեն բավարարում: Թղթի բացակայության պատճառով նա իր վարժությունները կատարում է պատերին՝ նկարելով տան մեջ պակասող կենցաղային իրերը՝ պահարաններ, դարակներ և այլն: Օրինակ, մուտքի դռան կողքին նկարում է մի քանի մեծագիր մեխեր, որոնք պիտի փոխարինեին դռնատների կախարաններին: Այդ մեխերն այնքան բնական էին նկարված, որ իրենց ծավալով ու պատի վրա առաջացրած սովորներով, հաճախ խաբում էին հյուրերին, որոնք կախելիս երկյուղով միշտ շոշափում էին նկարված մեխերը, իսկ գլխարկները, որոնց կախելու պրոցեսը արագ էր կատարվում, հաճախ վայր էին ընկնում:

Պատշգամբի պատի վրա նա նկարել էր պանոսի նման մի մեծ տեսարան, որն իրենից ներկայացնում էր ալեկոծված ծովի ալիքներում լողացող «Սիրեն աղջիկը» — ձկան պոչով մի առասպելական էակ:

Դեռևս 14 տարեկան հասակում ինքնուս նկարչի համբավը տարածվել էր ոչ միայն իրենց թաղամասում, այլև շրջակա վայրերում: Խանութպանները հաճախ դիմում էին Գևորգին, որ նա իրենց խանութի համար նկարի ցուցանակներ: Նման պատվերները Գևորգի համար շահեկան էին,

որովհետև այդ փոքր վաստակը նրա ընտանիքին նյութական զգալի օգնություն էր:

Մի օր, աշխատանքի ժամին, նրան հայտնում են, որ տանը սպասում է մի լավ ու սրտին մոտ նվեր: Երբ Գևորգը ծառայությունից վերադառնում է տուն, սեղանի վրա տեսնում է 12 գույներից բաղկացած ջրաներկերի մի տուփ: Այդ նվերը Գևորգին ուղարկած է լինում նրա մորաքրոջ որդի Ալեքսանդր Ղուլիջանյանը: Ներկերի հետ, սակայն, վրձիններ չկային: Գևորգը եղբոր մագներից մկրատով կտրում է մի փունջ, պատրաստում է վրձին ու առաջին անգամ ջրաներկով նկարում «Սիրեն» հեթանոսական պատկերը:

Գևորգի աշխատանքի ժամին սովորաբար ներկա էր լինում նրա ամենամոտիկ ընկեր՝ գավառապետ իշխան Էրաստ Զելոբակի որդի՝ Միտյան:

Գավառապետը իր ընտանիքով ապրում էր Գևորգի քեռու տանը, որ գտնվում էր Բաշինջաղյանների տնից ոչ հեռու: Ահա մի օր, նրա մտերիմ ընկեր Միտյան ճարպկորեն փախցնում է «Սիրեն» նկարը, վազում դեպի տուն ու ցույց տալիս իր ծնողներին:

Այդ պահին Զելոբակի տանն է լինում Թիֆլիսից նոր ժամանած՝ նահանգապետ Օրլովսկին, որին իշխանուհի Զելոբակյան մանրամասնորեն ծանոթացնում է Գևորգի ընտանեկան վիճակի հետ և ընդգծում նրա ունեցած մեծ սերն ու ընդունակությունը դեպի նկարչությունը: Իշխանուհու պատմածը տպավորություն է թողնում Օրլովսկու վրա, և նա ցանկություն է հայտնում անձամբ տեսնել Գևորգին: Տեսակցությունից հետո, Օրլովսկին պատանի նկարչին խոստանում է, Թիֆլիս վերադառնալով, զբաղվել նրա գեղարվեստական կրթության հարցով և ստեղծել համապատասխան պայմաններ: Այս արտասովոր դեպքը Գևորգի վրա թողնում է խոր տպավորություն, և նա տարվում է ապագայի վառ հույսերով:

Սակայն նահանգապետ Օրլովսկին Թիֆլիս վերադառնալով, կարծես մոռացություն է մատնում Գևորգի կրթության գործը. երկար ժամանակ նրանից ոչ մի լուր չի ստացվում: Բաշինջաղյանների ընտանիքին մոտիկ ծանոթ ուսուցիչ Կամսար Տեր-Մավթյանը, տեղյակ լինելով անցուղարձին, Գևորգին խորհուրդ է տալիս նամակ գրել Օրլովսկուն և հիշեցնել իր խոստումը:

Շուտով Օրլովսկուց պատասխան է ստացվում: Նահանգապետը

հայտնում է, որ Գևորգը ընդունված է Թիֆլիսի նկարչական դպրոցը և պետք է ուսանի անվճար: Գևորգի ուրախությունը, սակայն, երկար չի տևում: Կարճ ժամանակ անց, մի տխուր լուր վերստին խոր թախիժ է առաջացնում պատանու հոգում և խորտակում վառ ապագայի նկատմամբ նրա փայփայած երազանքները: Նահանգապետ Օրլովսկին հանկարծամահ է լինում: Բարեբախտաբար շուտով իշխան էրաստ Չելոքակին նահանգապետի պաշտոնով տեղափոխում են Թիֆլիս: Այս նշանակումը Գևորգի կյանքում ունենում է վճռական նշանակություն: Որոշ ժամանակ անց, նահանգապետ Չելոքակի ջանքերով նրան հաջողվում է ընդունվել Թիֆլիսի նկարչական ուսումնարանը:

1876 թ. հասնելով Թիֆլիս, Գևորգը իջևանում է Չելոքակի տանը: Այսօրվում են ստեղծագործական եռուն տարիները: Նկարչական ուսումնարանում նա մեծ ընդունակություններ է ցուցաբերում և շուտով լավ ապագա ունեցող նկարչի համբավ ձեռք բերում: Ակտիվորեն մասնակցելով ուսումնարանի տարեկան հաշվետու ցուցահանդեսներին, նա հանդես է գալիս ոչ միայն դասարանական աշխատանքներով, այլև արտադպրոցական էտյուդներով, որոնց մեջ արդեն նկատելի էր դառնում ապագա պեյզաժիստ նկարչի ունակությունը:

Նա հավասար եռանդով ու հաջողությամբ կատարում էր բոլոր տեսակի առաջադրությունները՝ նատյուրմորտ, պորտրե, պեյզաժ և կոմպոզիցիոն աշխատանքներ: Հետագայում, ինչպես հայտնի է, խորանում է գերազանցապես պեյզաժային ժանրի մեջ:

Բաշինջաղյանի աշակերտական շրջանում, նկարչական դպրոցում, կիրառվում էր կարևոր մեթոդական մի եղանակ, որի նպատակն էր զարկ տալ աշակերտների ստեղծագործական երևակայությանը: Ամեն մի աշակերտ, առաջադրությունը կատարելուց հետո, պարտավոր էր նույնը կրկնել հիշողությամբ: Ահա այդպիսի վարժությունները Բաշինջաղյանին մեծ օգուտ են տվել, և նա իր հետագա ստեղծագործական աշխատանքների ժամանակ հաճախ դիմել է այդ մեթոդին: Դպրոցում գոյություն ունեն նաև մի այլ օգտակար ձեռնարկում: Ամիսը երկու անգամ հրատարակվում էր աշակերտական ձեռագիր թերթ, որ նպատակ ուներ առաջին հերթին լուսաբանել արվեստի խնդիրները և որպես միակ միջոց՝ նպաստել արձակ շարագրությունների զարգացմանը: Այս կուլտուրական ձեռնարկումը Գ. Բաշինջաղյանին օգտակար ծառայություն է մատուցել, հնարավորություն տալով ի հայտ բերել արձակ շարագրու-

թյուններ գրելու իր բնածին հակումները: Նա այդ թերթում զետեղում է ոչ միայն բնության նկարագրություններ, այլև փոքրիկ, պատկերավոր լեզվով գրված նովելներ: Հետագայում Բաշինջաղյանն իր այդ ընդունակությունը ավելի է խորացնում նորանոր գրվածքներով, որ լույս է ընծայում առանձին գրքույկներով:

Նկարչական դպրոցում քառամյա ուսուցումն ավարտելուց հետո Գ. Բաշինջաղյանը ընտանիքը Սղնախ քաղաքից տեղափոխում է Թիֆլիս, քաղաքի ծայրամասերից մեկում, ներքնատան մեջ վարձում է մի սենյակ, իսկ ինքը տեղափոխվում մոր մոտ:

Ուսումն ավարտելուց հետո Գ. Բաշինջաղյանն իշխան Չելոքակի խնամքի տակից դուրս է գալիս և ընկնում նյութական վատթար վիճակի մեջ: Ապրուստի միջոց ձեռք բերելու նպատակով, նա Թիֆլիսի դատական ատյանում գրագրի պաշտոն է ստանձնում: Սակայն այդ պաշտոնից ստացած փոքր աշխատավարձով չի կարողանում ընտանիքը պահել, ուստի ստիպված է լինում դիմել վաստակի կողմնակի աղբյուրի: Եվ որոշում է օգտագործել դպրոցում ձեռք բերած իր գիտելիքները. պատճենահանում է ականավոր նկարիչների գործերը ու լավ գնով վաճառում:

Շուտով Գ. Բաշինջաղյանն արտանկարչության մեջ այնքան է հմտանում, որ կարճ ժամանակամիջոցում լավ համարում է ձեռք բերում և այդպիսով՝ ստանում նորանոր պատվերներ:

Նման օժանդակ պատվերները նրան հնարավորություն են տալիս որոշ գումար ետ գցել, մի քանի ամսով ընտանիքը նյութապես ապահովել և մեկնել Պետերբուրգ՝ Գեղարվեստական ակադեմիա, բարձրագույն կրթություն ստանալու: Հասնելով Պետերբուրգ, Գ. Բաշինջաղյանի առաջ ծառայում է մի մեծ դժվարություն: Նրանից պահանջում են կրթության ցենզի վկայական, որ նա չունի: Այդ նրան չի հուսահատեցրնում: Ակադեմիա մտնելու ցանկությունը նրա մեջ այնքան մեծ էր, որ կարճ ժամանակամիջոցում իր ջանքերով ու նոր ընկերների օժանդակությամբ ձեռք է բերում պահանջված կրթական ցենզը, վերջապես ընդունվում փայփայած՝ Գեղարվեստական ակադեմիան և առաջին օրից ևեթ լծվում համառ աշխատանքի, որը սակայն ընթանում է նյութապես անապահով պայմաններում:

Նա պետք է ոչ միայն իր ապրուստը հոգար, այլև ընտանիքի, իսկ կողմնակի ոչ մի օգնություն չէր ստանում:

Չնայած դրան, Գ. Բաշինջաղյանն ուսանողական շրջանում ևս լավ



ապագա խոստացող նկարչի անուն է վաստակում և ստանձնած ամեն մի ահադեմիական առաջադրություն կատարում է բարեխղճորեն ու մեծ ճաշակով: Այստեղ նրա դասատուն հիմնականում՝ ժամանակի հայտնի պեյզաժիստ Մ. Կ. Կլոդան էր<sup>1</sup>, պերեդվիժնիկների միություն հիմնադիրներից մեկը, որի ղեկավարությամբ էրիտասարդ նկարիչը ավելի ևս ամրապնդում է իր գիտելիքները, ձևավորվում որպես պեյզաժիստ: Սակայն թե՛ ուսանողական շրջանում և թե՛ ինքնուրույն աշխատանքի առաջին տարիներին Բաշինջաղյանը կրել է հայտնի պեյզաժիստ Կուլինջիի ազդեցությունը:

Կինեով արևային երկրի զավակ, նա դեռևս մանուկ օրերից բուռն զգացմունքներով սիրել է հայրենի հարավային բնության գեղեցկությունը. նրա բազմերանգ հարստությունը, լեռնային տեսարանների լայնարձակությունը և հեռապատկերները, այդ պատճառով էլ միշտ ժխտողական վերաբերմունք է ցուցաբերել դեպի պաշտոնական արվեստը, նրա պասսիվ մոտեցումը դեպի բնությունը, նրա արհեստականորեն հորինած՝ գեղեցիկի վերացական գաղափարը և պաշտպանել է միայն կենդանի, իրական կյանքի հետ կապված արվեստի սկզբունքները:

Բաշինջաղյանն ուներ շափազանց սուր դիտողականություն ու վառ երևակայություն, ընդունակ էր հիշողության մեջ պահել և ցանկացած ժամանակ վերարտադրել իր տեսած և ուսումնասիրած երևույթների ամեն մի մանրամասնություն, որ առհասարակ վրիպում է սովորական մարդու ընկալումից: Նրա ստեղծագործությունները հենց սկզբից աչքի էին ընկնում բնական ու թարմ գույներով:

Ակադեմիայում 1880—1883 թթ. ուսանում էին հայտնի նկարիչներ Մալմոնը (պատմական նկարիչ), Գիլլերը (ժանրիստ), Մահադեսյանը (ծովանկարիչ), Ստախովսկին (ծովանկարիչ), Շամշինյանը (նկարիչ-ժանրիստ, մանկավարժ): Վերոհիշյալ արվեստագետների հետ Բաշինջաղ-

<sup>1</sup> Միխայիլ Կոնստանտինովիչ Կլոդը ուսանել է Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում՝ նկարիչ Մ. Ն. Վորոբյովի մոտ: 1858 թ. փայտե կերպով ավարտում է ահադեմիան և երեք տարով ուղարկվում արտասահման կատարելագործվելու: 1861 թ. վերադառնում է հայրենիք ու նվիրվում հայրենի բնության գեղարվեստական վերարտադրությանը: Շուտով նա իր երկու նկարների համար՝ «Գիշերը նորմանդիայում» և «Գետի տեսարանը Լիֆլանդիայում», ստանում է ակադեմիկոսի կոչում: Այնուհետև Կլոդը հանդես է գալիս միայն հայրենի բնությունը պատկերող նկարներով: Նա, որպես պերեդվիժնիկների ընկերության հիմնադիրներից մեկը, 1870 թ. մասնակցել է նրա անդրանիկ պատկերահանդեսին:

յանը ընկերական սերտ կապ է հաստատում և միշտ համեստորեն օգտվում նրանց ցուցմունքներից ու խորհուրդներից:

Հայտնի է, որ կերպարվեստում՝ իդեական ռեալիզմի շարժումն ընդդեմ իդեալիստական պահպանողական արվեստի, պսակվեց մեծագույն հաղթանակով և տվեց ուսական կերպարվեստի զարգացմանը խթանող տաղանդների մի ամբողջ համաստեղություն՝ Ռեպինի և Սուրիկովի գլխավորությամբ: Պերեդվիժնիկների շարժումը հիմնված էր դեմոկրատական գաղափարների վրա, նրա նպատակն էր ժողովրդի կյանքի ճշմարտացի և խոր պատկերումը, ժամանակակից առաջավոր մտքերի ու արվեստի պրոպագանդումը՝ ժողովրդական լայն զանգվածների մեջ: Պերեդվիժնիկները, այսպիսով, հեղաշրջում մտցրին ուսական նկարչության մեջ, և օգնեցին դեմոկրատական գաղափարները մասսաների մեջ տարածելուն:

Բաշինջաղյանի Ակադեմիա ընդունվելու տարին, պերեդվիժնիկները կազմակերպում էին արդեն իրենց 7-րդ ցուցահանդեսը: Բաշինջաղյանը մեծագույն բախտի արժանացավ՝ մոտիկից ծանոթանալով ուսական տաղանդավոր նկարիչների՝ Մյասոյեղովի, Պերովի, Գէի, Կրամակոյի, Մակովսկու, Կլոդաի, Յարոշենկոյի, Ռեպինի և ուրիշների գործերին:

Ծանոթանալով 19-րդ դարի համաշխարհային կերպարվեստի այդ առաջավոր դպրոցի ռեալիստական սկզբունքներին, Բաշինջաղյանը հարում է նրան և դառնում նրա գաղափարախոսը հայ նկարչության մեջ: Նրա արվեստը այն ոսկե օղակներից է, որ պերեդվիժնիկների արվեստի գաղափարական և գեղարվեստական սկզբունքները կապում է հայ նկարչության հետ: Այդ դպրոցի առողջ ռեալիզմը Բաշինջաղյանի արվեստում մինչև վերջ մնաց որպես նկարչի միակ ստեղծագործական մոթոզը:

1883 թ. Բաշինջաղյանն ավարտում է Պետերբուրգի ակադեմիայի պեյզաժիստ դասարանը: Նրա աշխատանքը՝ «Կեչիների պուրակը» արժանանում է արծաթե մեդալի: Այդ նկարի ընդհանուր կոմպոզիցիան, գունային հարադասությունը, ճշգրիտ գծանկարը, ծավալայնությունը, հեռանկարային օրենքների պահպանումը՝ արդեն ինքնին խոսում էին ապագա նշանավոր նկարչի ռեալիստական ամուր սկզբունքների մասին:

Պետերբուրգից վերադառնալով Սոնխա, Գ. Բաշինջաղյանը տենդորեն պատրաստում է նկարչական պարագաները և քաղաք ժամանելու հետևյալ օրը ևեթ լուսադեմին, գնում է քաղաքի ժայրամասերը՝ Ալազանի դաշտավայրի արևածագը պատկերելու: Սակայն առաջին անգամ սահ-

մանափակվում է լուր դիտողություններով և վերագառնում տուն առանց մի որևէ էտյուզ անելու: Այդ դիտողություններն ու գեղեցիկ տեսարաններինց առաջ եկած հույզերը նա գրի է առնում և հետագայում դետեղում «Նկարչի կյանքից» գրքում, որտեղ բնության հրաշալիքը տաղանդավոր կերպով է նկարագրում:

«Փարնանային առավոտ է: Սղնախից դուրս մի բարձրավանդակի վրա կանգնած՝ նայում եմ դեպի արևելք, ուր անհուն տարածության մեջ՝ Կովկասյան լեռնաշղթայի ետևից նկատելի է մի շերտավոր գունավոր փայլ, որ հորիզոնից բարձր կիսաշրջան կազմելով, աստիճանաբար միախառնվում է հազիվ նշմարելի մանիշակագույն երկնքի հետ:

— Արևը շուտով կծագի,— մտածեցի ես:

Դաշտավայրն ընկղմված է խոր քնի մեջ, ծածկված մոխրագույն թանձր մառախուղով: Դա հիշեցնում է ինձ՝ ծովը և իրավ, այնքան նման է ծովին, որ անծանոթը հեշտությամբ կսխալվի: Երկինքը պարզ է և խաղաղ. բնության մեջ լուսնուն է տիրում:

Փայլը փոքր առ փոքր ընդարձակվելով երկնակամարի վրա, ոսկեգույնի է փոխվել: Թռչունների երամը սև գծի զանազան ձևեր ընդունելով, սլանում է ընդարձակ հովտի վրայով. մերթ բարձրանում է դեպի երկինք, մերթ իջնում ու խորասուզվում է մշուշի մեջ: Լեռների ձյունապատ գագաթների ետևից փայլն արդեն անհետացել է և տեղի է տվել բոցավառ արևին, որ ցույց տալով դեմքը՝ սփռել է իր տակ ոսկեփայլ փոշի: Բոլոր բարձրավանդակները, ուր մերկ ժայռերի կամ կանաչազարդ լեռների վրա գոնվում են կիսաքանդ պարիսպներ, սրբավայրեր, հին ավերակներ ու գերեզմանատուներ, ներկվել են զանազան կարմրախառն գույներով: Թեպետ մառախուղը դեռևս թանձր է և անշարժ, սակայն նրա միջից այսպես ու այնտեղ հսկայական ընկուղենիներն ու բարդինները խրոխտ կերպով դուրս են ցցել իրենց մուգ կանաչագույն գագաթները՝ կարծես արևածագը տեսնելու համար:

Արեգակը դանդաղությամբ բարձրանալով, գունատվում և հետըզհետ փոքրանում է, տալով երկնքին պարզ կապուտակ երանգ: Ոսկեփայլ փոշին այժմ արծաթի է փոխվում և ընդարձակվում լեռան ստորոտներում: Մառախուղն արթնանում, շարժվում է համեստությամբ և գուրջիանալով՝ դիմում է դեպի երկինք, անշտապ ու անվրդով:

Նա հասնում է լուսատուին ու թափանցիկ քողով ծածկում նրա դեմքը, քնքուշ ստվեր ձգելով երկրի վրա: Տեսարանն ավելի կախարդիչ ու

խորհրդավոր է դառնում: Լուսնունը շարունակվում է: Լուսատուն երկար չի համբերում քողի տակ, երբեմն ցույց է տալիս իր դեմքը, մի վայրկյան պայծառեցնում է բնության հրաշալիքը և դարձյալ ծածկվում քողի տակ: Մշուշը ջերմություն զգալով, շարունակում է բարձրանալ՝ արագացնելով քայլերը, իսկ երկնքի կապուտակի վրա գոյանում են բարակ, ճերմակ ամպեր: Ծովն այլևս չկա: Դաշտավայրն իր անվերջ տարածությամբ փոխված է առաջս, որի սահմանը լեռնաշղթան է և որի երկու ծայրերը հեռանալով, միախառնվում են օդի հետ ու կորցնում իրենց ձևն ու գույնը, և այսպիսով անտեսանելի դառնում:

...Բարձրավանդակի ստորոտում երևում են շինական աղբատիկ խրճիթներ՝ թաղված փարթամ բուսականության մեջ: Մի քանի տեղից ծուխ է բարձրանում: Գյուղերի և այգիների սահմանները վերջանում են ալիքաձև գծերով, իսկ դաշտը, զարդարված քառանկյունի գույնզգույն անթիվ գորգերով, շարունակվում է ու անհետանում հեռվում, ուր անխռով ու հեզանազ հոսում է Ալազանը՝ ոլոր ու մոլոր պտույտներով: Այս գետը միմյանցից բաժանում է բնության երկու տարբեր գեղեցկություններ՝ հարթ դաշտավայրը ճիառերի խիտ անտառից: Հովտի վրա փռված երփներանգ գորգերի հետ ներդաշնակում են անձրևներից գոյացած ճահիճները, որոնց մեջ երկինքը ցույց է տվել իր դեմքը, իսկ մի քանի տեղ նրանք բոցավառվում են արևի ճառագայթների անդրադարձումից: Ծառերի և թփերի մանր ու խոշոր ցիրուցան արած խմբերը լրացնում են տեսարանի շքեղությունը: Ճիառերի անտառը, գտնվելով դաշտի միջևում մակերևույթի վրա, տարածվում է մինչև Կովկասյան լեռնաշղթայի ստորոտները: Այս աննկարագրելի հեռավորության մեջ մեծաքանակ օդի ծալքերը խլել են ամբողջ տեսարանից հատուկ գույներ, պարզելով նրանց փոխարեն՝ թանձր կապույտ քողը:

Կուսական սրբությունն ու վսեմությունը տիրում է ամեն տեղ: Արեգակը շարունակում է բարձրանալ, աստիճանաբար տաքացնելով օդը և կարճացնելով ծառերից ընկած ստվերները:

Ահա պեղզաժիստ նկարչի աչքերով ու հոգու խոր զմայլանքով Ալազանի հովտում դիտված արևածագի նկարագրությունը, որը ցույց է տալիս միաժամանակ Գ. Բաշինջաղյանի գրական ակնհայտ ձիրքն ու վարպետությունը:

Այդ նույն տարին Բաշինջաղյանը կատարում է նաև բազմաթիվ թարմ ու գունագեղ էտյուզներ, որոնք հետագայում օգտագործում է մե-

ծաղիր կոմպոզիցիաների համար, ինչպես հայտնի «Ալագանի հովիտը», «Գիշերը Քուռ գետի վրա», «Աւանա լիճը» և մի քանի այլ կոմպոզիցիոն կտավներ:

Այդ և հետագա գործերը՝ մեծաքանակ էտյուդներն ու մեծաղիր կոմպոզիցիոն աշխատանքները Բաշինջաղյանն առաջին անգամ ցուցադրում է 1883 թ. Թիֆլիսի հասարակության առաջ ու վաստակում լավ նկարչի համբավ: Սակայն, որպեսզի հասկանալի լինի նրա գործած տպավորությունը Թիֆլիսի անտարբեր հասարակության վրա, բերենք մի այսպիսի օրինակ:

Ինչպես պատմում է Շիրվանզադեն, ոմն Միրզոյան, 70-ական թվականներին, Թիֆլիսի կեղտոտ փողոցներից մեկում բաց է անում մի փոքրիկ սալոն: Փոքրիկ էր այն, բայց իր բովանդակությամբ շատ ավելի մեծ քաղաքների հասարակության ուշադրության արժանի: Այնտեղ ցուցադրված էին մեծաղիր նկարներ, մասամբ բնանկարներ, մասամբ իտալական և ֆլամանդական հուշակավոր նկարիչների գործերի տաղանդավոր պատճենահանումներ: Թվում էր, թե այդ բավական պետք է լիներ, որպեսզի սալոնը արժանանար հասարակության ուշադրությանը: Սակայն ոչ ոք նրանով չհետաքրքրվեց: Նույնիսկ մամուլը անտարբեր մնաց: Օրվա ընթացքում կարելի էր տեսնել մի քանի այցելուներ ու մենմենակ սալոնը կազմակերպող Միրզոյանին, որը թափառում էր ոսկեզօծ շրջանակների մեջ դրած հին շկուլպի նկարների առջև և հրճվում: Սալոնը փակվեց, այդպես էլ ոչ մի հետք չթողնելով ժամանակակիցների հիշողության մեջ:

Մի քանի տարուց հետո մեռավ նրա տերը և այդպիսով այդ հուշակավոր նկարներն ընկան նկուղ ու ոչնչացան:

Ահա այս հետադեմ Թիֆլիսում, 80-ական թվականներին, նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը մեծ անձնվիրություններ ու եռանդով սկսեց իր ստեղծագործական փշոտ ուղին և կարողացավ նրա համառ անտարբերությունը կոտրել:

Հասկանալի է, որ այդ ժամանակվա Թիֆլիսի համար Գ. Բաշինջաղյանի անհատական պատկերահանդեսը կուլտուրական բացառիկ նշանակություն ունեցող մի երևույթ էր:

Նրա նկարների հաջողության գաղտնիքը հարազատ բնության ճշմարտացի և ոգեշնչված պատկերման ուժի և արտահայտչականության մեջ էր: Պատկերահանդեսը, բացի բարոյական հատուցումից, նրա հե-

ղինակին տվեց նաև դրամական այնքան վաստակ, որ նա հնարավորություն ստացավ իրականացնելու իր վաղեմի երազանքը՝ ճանապարհորդելու դեպի արտասահման, գլխավորապես Իտալիա, և ուսումնասիրելու կլասիկ արվեստագետների գործերը:

Մեկնելով արվեստների կենտրոն Հռոմ քաղաքը, Գ. Բաշինջաղյանը շրջում է աշխարհահռչակ գեղարվեստական վայրերը և որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո, նույն նպատակով այցելում է Վենետիկ, Միլան ու Ֆլորենցիա:

Վերադառնալով Եվրոպա կատարած ճանապարհորդությունից, ստեղծագործական նոր լիցքով վերսկսում է էտյուդային աշխատանքները՝ շրջելով Անդրկովկասի ուշագրավ վայրերը:

Նա մեծ եռանդով ու ոգևորությամբ պարբերաբար կազմակերպում է անհատական պատկերահանդեսներ, որտեղ ցուցադրում է զգալի քանակությամբ էտյուդներ, կոմպոզիցիոն մեծաղիր աշխատանքներ: Արտասահմանից վերադառնալուց հետո առաջին պատկերահանդեսը Բաշինջաղյանը կազմակերպում է 1885 թ. Թիֆլիսում և մամուլի կողմից արժանանում գովասանքի:

Ականալիոր դերասան Պ. Աղամյանը, որը Բաշինջաղյանի տաղանդի երկրպագուն էր և մոտիկ բարեկամը, «Նոր-դար» լրագրում գետնդրում է հետաքրքիր մի հոդված, ուր մեծ գովասանքով է բնորոշում նրա արվեստը, հայ հասարակությանը կոչ անելով, նրան որպես նշանավոր և նորատիպ տաղանդի՝ ցույց տալ թե՛ բարոյական, թե՛ նյութական օժանդակություն և ձեռք բերել նրա արժեքավոր կտավներից:

Քանի որ այդ հոդվածը վերաբերում է Գ. Բաշինջաղյանի գեղարվեստական գործունեության սկզբնական շրջանին, հարկ ենք համարում մեջ բերել նրանից մի քանի ուշագրավ քաղվածքներ, այն նկատառումով նաև, որ հոդվածագիրն եղել է միաժամանակ օժտված տաղանդավոր սիրող նկարիչ: Աղամյանը գրում է. «Ես չեմ կարող երբեք մոռանալ այն քաղցր տպավորությունը, որ ներգործեց ինձ վրա, և ես հենց այդ տպավորություններս կցանկանամ հավատարմաբար նկարագրել և իբր քիչ-շատ գնահատողի՝ հայտնել անկեղծ կարծիքն ու զգացումն մի նշանավոր և նորատիպ տաղանդի մասին, որոյ վրձնույն յուրաքանչյուր հարվածները կրում են արդեն իրականության և բանաստեղծության դրոշմը, որք հափշտակելով գրավում են զգայուն և բանիմաց անձանց երևակայությունը և ուշադիր զմայլումը:

Անկարելի է անտարբեր մնալ նրա նկարների առաջ, որք ճարտար ճշտությամբ զարդարված են հեռագիտական կանոնավոր գեղեցկությամբ և գույների ներդաշնակ իրականությամբ: Լույսի և ստվերի մեղմ աստիճանները, որով նա ցույց է տալիս զանազան տեղյաց հավատարիմ տիպարը...

...Գ. Բաշինջաղյանի նկարների մի արժանավարություն է քերթուղական զգացմանց ներդաշնակ միությունն ու մրցումն իրականության հետ... Միայն շատ ու շատ ցանկալի կլինեն, որ Գ. Բաշինջաղյանը քիչ ավելի խնամք տաներ իր գծագրության, հավասարեցնելով նրան իր գույների զմայլելի ճշտության հետ և հետո սկսել պճնել իր գործերը մարդկանց կամ կենդանյաց ներկայությամբ, որք շատ ավելի կենդանություն կտային այդ նկարոց և որոց բացառություն կարող է զգալի լինել ապագայում, մի տեսակ միակերպություն տալով իր գործերին: Օրինակի համար՝ ի՛նչ հիանալի բան կլինեն, եթե Գ. Բաշինջաղյանը առիթ ունենար նկարել Ախուրյան գետի ափանց դաշտավայրը, ծածկած ցորենի ոսկեփայլ արտերով և արտերի մեջ մտցնել հայ գյուղացի կանանց՝ իրենց կարմիր զգեստներով և սպիտակ ու դեղին կապերով, որք արտորալով հնձում են ու դարսում:

Այսպիսով, Գ. Բաշինջաղյանը կարող կլինի ավելի կենդանի կերպով ծանոթացնելով մեզ մեր վայրերը, իր հանճարեղ վրձնույն շնորհիվ, որ ինչքան, որ ճշմարտությամբ տողորվում է կտավին վրա մեր հայրենիքով, երանի նրա կեսին չափ տողորվեր նրա սերը մեր սրտերում, որով կարողանայինք արժանավորապես գնահատել այդ հայրենիքի տաղանդավոր զավակայ կարևորությունը և ջանայինք յուրաքանչյուրս նպաստելով նրա զարգացման, Եվրոպիոյ համարմանը արժանանալ առաջագիժելով զիտությունց և արվեստի մեջ:

...Բոլոր նրա նկարները, որոնց մանրամասն նկարագրությունը երկար կլինեն, կհաստատեն ինձ իմ համոզման մեջ, այդ նկարների առաջ շատ անգամ կանգնեցա զմայլանքով, սաստիկ նեղանալով շրջանակին դեմ, որ կարծես սահմանափակվելով արգելում է տեսնել այդ գեղեցիկ տեսարանաց շարունակությունը»:

Վերջին տողերը ոչ միայն բնորոշ են Բաշինջաղյանի պեյզաժների լայնատարածությունն ու թափին, այլև այդ տողերը գրող՝ բեմի մեծագույն վարպետի անսահմանափակ թափին ու տաղանդի ուժին, որն իր

շրջանակներից դուրս է պոթկում և իր ստեղծագործության համար պահանջում լայն ու մեծ կտավներ:

Անհատական պատկերահանդեսներում ձեռք բերած հաջողությունները նկարչի առաջ լայն հեռանկարներ են բաց անում. նա անընդհատ շրջում է, մի շարք պեյզաժներ անում, որոնք ոչ թե մեծացրած էություններ էին, այլ նոր խնդիրներով լուծված ստեղծագործություններ: Մուտով նա շահմանափակվելով Թիֆլիսով, իր գեղարվեստական արտադրանքը հանդես է բերում Անդրկովկասի և Ռուսաստանի մի շարք քաղաքներում, մինչև անգամ արտասահմանում:

Բաշինջաղյանին բնության գրկում չէր կարելի պատկերացնել առանց նրա անբաժան ընկերների՝ ձախ ուսից կախած նկարչական պայուսակի ու ծալվող փոքրիկ աթոռի, աջ ձեռքում բռնած երկար ձեռնափայտի: Նա քայլում էր դանդաղ, միշտ նայելով իր շուրջը, կանգ առնելով մեկ այստեղ, մեկ այնտեղ, ուշիմ հայացքով որոնելով բնության գեղեցիկ կտորներ՝ կտավի վրա դրոշմելու համար: Եվ երբ այդպիսին գտնում էր՝ հափշտակված անցնում էր աշխատանքի:

Նա իր ստեղծագործական կյանքում ունեցել է մի նշանաբան, որի համաձայն, գործնական աշխատանքի էր անցնում միայն բնության երևույթները երկար, ուշիմ կերպով ուսումնասիրելուց հետո:

Մեծ արվեստագետը բնությունը պատկերելիս արհեստականորեն պատրաստ երանգավնակով չէր աշխատում, այլ ամեն անգամ այն պատրաստում էր բնության որոշ կտորի ուսումնասիրությունից հետո, աշխատելով ճշմարտացի երևան հանել տեղի կոլորիտը: Նրա ստեղծված, միայն այս մեթոդով կատարված աշխատանքը կարող էր մնայուն լինել: Օժտված լինելով վառ երևակայությամբ, ժրաշան մեղվի նման հավաքում էր տպավորությունների մեծ պաշար և հետագայում կարողանում հիշողությամբ ձիշտ վերարտադրել: Բնության տեսարաններն օրվա տարբեր մոմենտներին՝ նա ընդունակ էր հետագայում այնքան իրական գույներով պատկերելու, որ դիտողին թվում էր, թե տվյալ նկարը կատարված է ոչ թե հիշողությամբ, այլ անմիջական տպավորության տակ:

Գ. Բաշինջաղյանը չափազանց բեղմնավոր և աշխատունակ նկարիչ էր: Նա առանց լարված աշխատանքի ոչ մի օր չէր անցկացնում: Նրա համար մի օր չաշխատելը կնշանակեր որոշ չափով հետադիմել:

Նույն միտքն ափանավոր կոմպոզիտոր Ն. Ռուբինշտեյնն իր հիշատակարանում հետևյալ ձևով է արտահայտել. «Եթե մի օր ես չեմ նվա-

գում դաշնամուրի վրա, իմ հետամնացութիւնը ես եմ նկատում, իսկ էթե երկու օր չեմ նվագում, իմ հետամնացութիւնը նկատում են ընտանիքի անդամները, իսկ էթե երեք օր չեմ նվագում, այն ժամանակ իմ հետամնացութիւնը հասարակութիւնն է նկատում»:

Գ. Բաշինջաղյանը համոզված լինելով, որ մինչև անգամ մի օրվա անգործութիւնը իր համար որոշ հետամնացութիւն է, լարվածորեն աշխատում էր ոչ միայն այդ հետամնացութեան սպառնալիքի տակ, այլև ստեղծագործելու անդամադրելի պահանջից մղված:

Ահա այս ներքին մղիչ ուժն էր զրդապատճառը, որ նա հնարավորութիւն էր ունենում համարյա ամեն տարի կազմակերպել իր անհատական պատկերահանդեսը:

Հաճախ էլ նա հանդես էր գալիս այլ նկարիչների հետ միացյալ պատկերահանդեսներում:

Այսպես, 1886 թ. Թիֆլիսում մի քանի նկարիչների հետ միասին կազմակերպում է միացյալ ճոխ պատկերահանդես, ուր ցուցադրում է վարպետութեամբ կատարված էտյուդներ և մի քանի մեծադիր պեյզաժան կոմպոզիցիաներ, որոնց թվում նաև «Արարատ»-ը:

Մի այլ անգամ իր լավագույն գործերով հանդես է գալիս Թիֆլիսի «Փառքի տաճարում», 1890 թվականին կազմակերպված միացյալ պատկերահանդեսում, ուր ցուցադրում է այժմ արդեն հանրածանոթ հետեյալ պատկերները.

1. Արաքս գետը
2. Սանահինի շրջակայքից
3. Ալազանի հովիտը
4. Անձրևային օրը Սևանա լճում
5. Շոթա Ռուսթավելու «Ընձենավոր» պոեմից
6. Անտառը ձմեռ ժամանակ
7. Մայիսյան առավոտ
8. Արարատ
9. Անձրևից առաջ
10. Սոճիների անտառը
11. Մանգլիսում
12. Էլբրոս
13. Դերեա գետը
14. Լուսնյակ գիշերը Քուռ գետի վրա

15. Գիշերը Սև ծովում
16. Լուսնի ծագումը
17. Լճի ափը
18. Ձմեռը հարավում
19. Կայծակ

Ավետիք Արասխանյանը «Մուրճ» ամսագրում այդ պատկերահանդեսի մասին խոսելիս առանձնապես կանգ է առնում Գ. Բաշինջաղյանի ստեղծագործութիւնների վրա և գովաբանում:

Իսկ «Լուսնյակ գիշերը Քուռ գետի վրա» նկարի մասին Շիրվանզադեն 1891 թ. «Տարագ»-ի մեջ հետեյալ նկարագրութիւնն է տալիս.

«Մեր երիտասարդ տաղանդավոր նկարիչ Գ. Բաշինջաղյանը ցուցադրել է Քուռ գետի մի տեսարան՝ գիշեր ժամանակ: Լուսնյակ գիշեր էլ լրացած լուսինը կանգնած երկնակամարի մեջտեղ՝ տարածում է իր կաթնածիր լույսը շրջապատի վրա, նույն լույսը ոսկեգույն և արծաթագույն շողերով արտափայլում է օձաձև գալարվող Քուռ գետի ջրի մեջ՝ տարածելով իր շորս կողմը աղամանդյա սլաքներ, և կապուտակ երկնակամարը հենվում է հորիզոնի վրա, որ ձախ կողմից վերջանում է լեռներով, իսկ մեջտեղից անսահման տարածութեան հետ խառնվող մարգագետիններով:

Գ. Բաշինջաղյանը հոգով բանաստեղծ է և ձգտումներով արտիստ, ահա թե ինչու նա կարողանում է ըմբռնել բնութեան հրաշալիքները, որոնք թաքնված են կոպիտ հոգիների համար»:

1894 թ. Բաշինջաղյանը ցուցադրում է մի շարք պատկերներ, որոնցից երկուսին՝ «Արարատը լուսածագին» և «Սևանա լիճը գիշերվա ժամանակին»-ին «Տարագ»-ը բարձր գնահատական է տալիս, համարելով դրանք նույն բնապատկերների ամենահաջողված վերարտադրութիւնը<sup>1</sup>:

Հետեյալ ծավալուն պատկերահանդեսը, որտեղ հանդես է եկել մեր նկարիչը իր գործերով, տեղի է ունեցել 1897 թ. «Կովկասյան պատկերահանդես» անվան տակ:

Այդ տարվանից Գ. Բաշինջաղյանը մեծ եռանդով պատրաստվում է մասնակցելու 1900 թ. Փարիզում բացվելիք համաշխարհային մեծ ցուցահանդեսին:

<sup>1</sup> «Տարագ», 1894 թ., № 5:



Ամառը նա գնում է Անի, նկարում է մայր եկեղեցին, Անիի պարիսպը հյուսիսային կողմից և մի շարք նկարներ ու էտյուդներ: Այնուհետև վերադառնալով Թիֆլիս, նկարում է երկու մեծադիր պատկերներ՝ «Անտան աշնան ժամանակ» և «Արարատ»-ը:

«Տարազ» ամսագիրը (1898 թ. № 26) այդ նկարները արժեքավորում է որպես տաղանդավոր նկարչի վրձնի գործեր: Նույն տարին Գ. Բաշինջաղյանը բնականից նկարում է մեծադիր մի էտյուդ, «Երևանի այգի» անվան տակ: Կանաչազարդ ծառերով լի այգու միջից բարձրանում են հողածածկ կտուրներով երկու-երեք հին շինություններ: Այգու մեջտեղից տարածվում է սալի լայն ճանապարհը և մի երկու պտույտ անելուց հետո՝ անհետանում մառախուղի մեջ:

Արևը նոր է ծագում. շինությունների կտուրներն ու նրանց կողքից խոյացող բարդիների գագաթները ներկվել են ծիրանի գույնով: Նկարի հեռավատկերը կազմող դաշտը հետզհետե հեռանալով՝ մի շատ ընդարձակ տափարակ տարածություն է կազմում և հորիզոնի մոտ աննկատելի կերպով մշուշի տակ ծածկվում: Երկինքը պարզ է և խաղաղ, իսկ նրա բաց կապուտակի վրա բարձրացել է սքանչելի Արարատի ոսկեփայլ գլուխը:

Այս գործից բացի, Գ. Բաշինջաղյանի մոտ կուտակվում են ավարտված մի շարք նոր պատկերներ, և նա որոշում է նախքան համաշխարհային ցուցահանդեսին ներկայացնելը, հանդես գալ արտասահմանում, առաջին հերթին Փարիզում, ուր և 1899 թ. վերջին տանում է իր գործերը:

Այդ մասին «Հանդես ամսօրյան» 1900 թվականին գրում է.

«Ուրախալի երևույթ մըն էր, որ այս վերջին տարիներս հայ արվեստագետները իրենց նվրոպայի արվեստակիցներից բարի օրինակ առնելով և քաջալերվելով, ծախք ու աշխատություն չեն խնայել իրենց ձեռաց դյուրաց արվեստակերտն ի ցույց դնելու: Իրենց ի Պարիզ գտած ընդունելությունն այս քայլն ու աշխատությունն լիովին վարձատրեց: Գաղիական լրագրերն համակրանք և գովությունք խոսեցան իրենց նկարներու վրա, մեծապես գնահատելով զանոնք՝ Գ. Բաշինջաղյանի շորս դաշտանկարներն. «Ամպեր», «Կոչկայի լիճը», «Տարիալի կիրճը» և «Արարատ», որոնք նաև նկարուց ցուցահանդեսին ամենայն ուշադրավն էին...»

...Գ. Բաշինջաղյանը շատ հայտնի է ռուսական նկարիչներու կարգի մեջ, վասնզի, նա Ս. Պետերբուրգի կայսերական գեղարվեստից ակա-

դեմիայի նախկին աշակերտ եղած է և այսօր ալ ռուսական գեղարվեստից ընկերության միակ հայ անդամն է»:

Գ. Բաշինջաղյանի երկրորդ արտասահմանյան ուղևորությունը տեղի է ունենում իր ընտանիքի հետ միասին, 1900 թվականին: Այս անգամ նա որոշել էր երկու տարի մնալ գեղարվեստի և գրականության կենտրոնում, մասնակցել համաշխարհային ցուցահանդեսին և կատարելագործվել: Փարիզում՝ Գ. Բաշինջաղյանն իր աշխատանքների համար ընտրում է նորանոր թեմաներ. «Սենայի գետափ»-ը (աշխատավորներ), ըստ Վիկտոր Հյուգոյի հայտնի վեպի, «Գետսեմանի պարտեզ»-ը և այլ գործեր: Այնուամենայնիվ նրա հետագա աշխատանքների համար գլխավոր շարժառիթները եղել են նրա սիրած ու փայփայած հայրենի թեմաները, ինչպես՝ «Արարատը արևածագին», «Արարատը վերջալույսին», «Սևանի ցերեկային և գիշերային տեսարանները», «Քուռ գետի տեսարանը», «Գեոլ-գեոլ լիճը», «Ալազանի հովիտը», «Գիշերը Կասպից ծովի վրա», «Կազբեկ», «Անիի ավերակները», «Ջանգու գետը», «Ալազյազ», «Հրդեհ վրացական գյուղում» և այլն:

Երկու տարի Փարիզում մնալուց հետո Գ. Բաշինջաղյանը մեծ ստեղծագործական բեռով վերադառնում է Թիֆլիս և «Փառքի տաճարում» բաց անում իր պատկերների մի մեծ ցուցահանդես: «Մուրճ» ամսաթերթը ողջունելով նրա կատարած առաջընթացը, 1902 թ. գրում է.

«Գ. Բաշինջաղյանն արտասահմանում մնալով երկու տարի, առաջադիմության մեծ քայլ է արել և այդ ժամանակամիջոցում արտադրել է մի շարք նրա արվեստի առաջխաղացումը բնորոշող նկարներ»:

Ինչպես 1884 թվականին Իտալիա, Չիլիցերիա և այլուր կատարած ուղևորության ընթացքում, այնպես էլ 1900—02 թթ. Փարիզում ապրած ժամանակ, նկարչի ծանոթությունը եվրոպական ժամանակակից արվեստի, մանավանդ բուրժուական ֆորմալիստական ուղղությունների հետ ոչ մի կերպ չի խախտում նրա ռեալիստական տեսակետներն ու սկզբունքները: Նա իր նկարչությունը հարստացնում է կլասիկ արվեստի խոշորագույն վարպետների գործերի ուսումնասիրությամբ և առօրյա գործնական ստեղծագործական աշխատանքով:

Մշտական բնակություն հաստատելով Թիֆլիսում, նկարիչը կրկին ծավալում է իր ստեղծագործական և հասարակական լայն գործունեությունը, Կովկասի տարբեր քաղաքներում կազմակերպելով ցուցահան-

դեաներ և դրանով իսկ մեզանում սկիզբ դնելով ցուցահանդեսային լայն պրակտիկային:

Պերեդվիժնիկների օրինակով իր ստեղծագործությունը հասցնելով լայն մասսաներին և այդպիսով բարձրացնելով նրանց գեղարվեստական կուլտուրան ու ճաշակը, Բաշինջաղյանը նվաճում է ժողովրդի և առաջավոր ինտելիգենցիայի սերն ու հարգանքը, որոնք խորապես հասկանում և գնահատում էին նրա արվեստը: Իսկ հայ բուրժուազիան, ինչպես միշտ, մնում է խիստ անտարբեր, և եթե երբեմն Բաշինջաղյանից գնում է գործեր, ապա դրանք դիտում է որպես տան զարդ կամ դրամական արժեք ներկայացնող իր: Հետաքրքիր են Բաշինջաղյանի բազմաթիվ ցուցահանդեսների առթիվ կովկասյան մամուլում լույս տեսած հոդվածներն ու գրախոսականները, որոնց մեջ անընդհատ խոսվում է բուրժուազիայի անտարբերության մասին: Ինքը՝ Գևորգ Բաշինջաղյանը Բաքվում կազմակերպած ցուցահանդեսի մասին գրում է. «Եթե հափըշտակված չլինեի գեղարվեստի բարձր սիրով, վաղուց արդեն թողած կլինեի ասպարեզս: Անցյալ տարի Բաքվի ժողովարանում՝ իմ պատկերների ցուցահանդեսն էր, մյուս, ազատ մասը ժողովարանի ակումբանոցի դահլիճն էր, ուր բաքվեցիները հավաքվում էին թուղթ խաղալու համար: Մուտքը մեկ էր, և ի՛նչ եք կարծում. նրանք իմ պատկերների մոտից անցնելով, մտնում էին ակումբանոցի դահլիճը թուղթ խաղալու, առանց ուշադրության արժանացնելու ուրիշ քաղաքից եկած հայ գեղարվեստագետի պատկերահանդեսը»:

Բուրժուազիայի՝ դեպի արվեստն ունեցած այդ անտարբերությունը ժամանակին խայթող ծաղրով մերկացրել է այժմ անվանի արվեստագետ, ժող. դերասան Արմեն Արմենյանը:

Դիտելով Բաշինջաղյանի ցուցահանդեսը և զմայլելով նրա վրձնի ստեղծած գեղեցկություններով, Արմենյանը գրում է.

«Այցելունքը քիչ էին. ինչո՞ւ»:

Որովհետև նրանք «գործնական» մարդիկ են (խոսքը բուրժուազիայի մասին է: Հեղ.): Ինչ կարիք կա կտավի մի կտորի համար հարյուրներ, հազարներ վճարել, երբ բազարում կարելի է նույն մեծությամբ և ավելի փայլուն, գնել ամենաշատը 5—10 ոտբլով և կախել ճաշասենյակում, դահլիճում, ննջարանում, անլոդնի գլխին... Նրանք դեռ չեն բմբռնել, որ իրենց կերած սովորի խորովածի, իրենց խմած կախեթի գինիի շափ անհրաժեշտ է նաև ճաշակել նուրբ գեղարվեստական ճաշակ,

որ ինչպես գիտությունը, գրականությունը, ինչպես երաժշտությունը, թատրոնը, նույնքան և նկարչությունը անբաժան մասն են կազմում այն աննդի, որ անհրաժեշտ է մարդուն զանազանվելու համար ... անբան անասունից»:

Վերոհիշյալ թղթակցությունները, ինչպես նաև այլ հոդվածներ և վերջապես Բաշինջաղյանի ողջ ստեղծագործությունն ապացուցում են, որ նրա արվեստի ժողովրդական բնույթը շատ ու շատ բարձր էր բուրժուազիայի բուլվարային ճաշակից և չէր կարող գնահատվել անշուշտ վերջինիս կողմից: Դրան հակառակ, Բաշինջաղյանին բարձր էր գնահատում առաջավոր ինտելիգենցիան, որը ոչ միայն բարոյական օժանդակություն էր ցույց տալիս, այլև ամեն կերպ աշխատում էր օգնել նրա նկարները վաճառելուն: Այսպես, օրինակ, մի հոդվածագիր հայտնում է, թե հանձարեղ դերասան «Պետրոս Ադամյանը մտադիր է աշխատել, որ այդ նկարներից մինը գոնե վիճակախաղով փող դառնա»:

Բաքվի երկրորդ ցուցահանդեսում Գ. Բաշինջաղյանը ներկայացրել էր 45 կտավներ, որոնցից 30 մեծադիր գործերը նկարել էր Փարիզում: Այդ պատկերահանդեսի առաջին օրից ևեթ գանձապահուհու հիվանդության պատճառով, նա ինքը նստում է սեղանի մոտ և մուտքի տոմսեր տալիս այցելուներին: Նկարները տեղավորված են լինում այսպես ասած ակումբի «Դեղին դահլիճում», իսկ ակումբի ամենամեծ դահլիճում այդ ժամանակ տեղի էր ունենում մի բազմամարդ ժողով, որին ներկա էին Բաքվի ողջ ֆինանսական մագնատները և տեղական նավթարդյունաբերության ներկայացուցիչները: Ժողովը վերջացնելուց հետո ներկա ևղող հյուրերի մեծամասնությունը այցելում է պատկերահանդեսը: Նրանց մեջ էր նաև այն ժամանակվա հայտնի միլիոնատեր նավթարդյունաբերող Մուսա-Նաղիկը: Յուցադրած նկարներից ամենից շատ նրա ուշադրությունը գրավել էր կեչիների անտառը պատկերող նկարը:

Մուսա-Նաղիկը այդ պատկերի արժողությունը իմանալու համար իր ներկայացուցչին ուղարկում է Գ. Բաշինջաղյանի մոտ:

Նկարի գինը կատալոգում նշանակված էր 1200 ու.: Մուսա-Նաղիկը իմանալով այդ, զայրացած բացականչում է. «Աղա, սա ի՛նչ է, նավթի պահաման է, ի՛նչ է»: Իհարկե նա այդ պատկերը չի գնում: Երևում է նավթի պահամանի արժողությունը պակաս չէր պատկերի արժողությունից:

Բաշինջաղյանն այդ պատկերահանդեսում մեծակ չէր. նրա հետ

միասին իրենց գործերը ցուցադրել էին նաև Թերլեմեզյանը, Չոմժերը, Չոգեղը, Թոբձեն, Սկլիֆասովսկին, Շուպը, Շմերլինգը, Մրեվիշվիլին, Ջանկովսկին, Ջախարովը, Եղ. Թադևոսյանը, Հակոբյանը և քանդակագործ Միքայելյանը: Բաշինջաղյանի ցուցադրած նկարների մասին «Անահիտ» ամսագրում (1907 թ.) կարդում ենք. «Գ. Բաշինջաղյանը, որը մեր մեջ վաղուց արդեն ծանոթ է, որպես տաղանդավոր նկարիչ, ցուցադրել է քառասունհինգ մեծադիր նկարներ: «Արարատի» և «Սևանի» շնորհալի արվեստագետը մի ումանտիկ է, ուզում եմ ասել՝ զգացմունքների երգիչ: Նա սիրում է երգել լեռների հետևից մեռնող արևի անասման տխրությունը, մշուշներու մեջ ծնող արշալույսների հմայքը և լուսնյակ գիշերների խորհրդավոր անդորրությունը: Նրա գեղեցիկ գործերից մինն է «Սևանի» մեծադիր նկարը: Համատարած ջրի միջից կղզին դուրս է ցցվում իր մութ զանգվածով»:

Այդ շրջանում Բաշինջաղյանի ստեղծագործությանը բարձր գնահատական է տալիս նաև ուսական մամուլը, երբ նա իր լավագույն նկարներից մի քանիսը՝ «Նաչատուր Աբովյանի տնակը Քանաքեռում», «Ալազանի հովիտը», «Էջմիածնա լիճը», «Սևանը վերջալույսին» 1911 թվականին ցուցադրում է Պետերբուրգյան նկարիչների միության 19-րդ ցուցահանդեսում: Ռուս հողվածագիրն իր առաջին տողերը սկսում է այսպես՝ «Բոլոր հինգ հարյուր նկարների մեջ, ճշմարիտն ասած, ամենից առաջ աչքի են ընկնում բարձր տրամադրությամբ ոգեշնչված Քաշինջաղյանի պեյզաժները»:

Այսպիսով, Բաշինջաղյանը՝ իր ստեղծագործական և ցուցահանդեսային լայն գործունեությունը սկսելով 1883 թվականից, մինչև կյանքի վերջը ստեղծել է ավելի քան 2000 մեծ ու փոքր կտավներ, որոնցից դժբախտաբար, միայն մի մասն է այսօր գտնվում թանգարանում. մնացածը դեռևս մասնավոր մարդկանց մոտ է: Այդ աշխատանքների հավաքումը և կենտրոնացումը խիստ անհրաժեշտ է լրացնելու համար նկարչի թողած սքանչելի ժառանգությունը:

Իր նկարներով Բաշինջաղյանը հիմնականում արտահայտել է բնության խաղաղ տրամադրությունները: Այդ տրամադրությունները համակված են խոր ապրումներով, բանաստեղծական նրբին զգացմունքներով, զմայլանքով, խոհականությամբ: Նա անհուն սիրով պատկերել է իր հայրենիքը. Անդրկովկասի բարձրաբերձ լեռները, անդնդախոր ձորերը, լճերի և ծովերի սքանչելի կապույտն ու նրանց ալիքների ծփանքը,

ուսկեզույն դաշտերը, հայրենի երկնակամարը՝ հսկա ամպերի կուտակումով ու պարզ երկնքով, լուսնյակ գիշերները և, վերջապես, ձմեռն անտառում, լեռնաշղթայում, հայկական գյուղում: Այդ բոլորը նկարված են տարվա տարբեր եղանակներին հատուկ գունային հարազատ կոլորիտով ու ռեալիստական բարձր վարպետությամբ:

Առանձին խանդավառությամբ նկարելով հայրենի բնությունը, ուր ապրում է իր ժողովուրդը, նա իր արվեստով ժողովրդի մեջ զարթեցրել է սեր դեպի այդ բնությունը: Հայրենասիրությունը կազմում է Բաշինջաղյանի արվեստի էությունը. նրա յուրաքանչյուր գործում ապրում է այդ վեհ զգացմունքը: Սակայն նրա հայրենասիրությունը չի սահմանափակվել նեղ ազգային շրջանակներում. նա բարձր է իր ինտերնացիոնալիզմով, հարևան ժողովուրդների կենցաղի և կուլտուրայի նկատմամբ ունեցած հարգանքով ու բնության հանդեպ տաժած խոր սիրով:

Սիրելով իր հայրենիքը, Բաշինջաղյանը սիրել է նաև եղբայրական Վրաստանն ու Ադրբեջանը և նույնպիսի ոգևորությամբ նկարագրել նրանց բնությունը:

Նկարչի մոտ սերը դեպի վրաց ժողովուրդը զարգացել և ամրացել է դեռևս վաղ պատանեկան շրջանից: Հետագայում այդ մասին նա առանձին սիրով է հիշում. «Վրաց ժողովուրդը, որի բնավորության մեջ կա պարզասրտություն և ազնվություն, հայի հետ թշնամություն չի ունեցել և չունի, — գրում է նկարիչը: — Կան գյուղեր և քաղաքներ, ուր այս երկու ազգակիցները ապրում են միանգամայն համերաշխ (նույնիսկ ավելի սիրով, քան թե հայերը իրար հետ): Իրար կից, կողք-կողքի տներն ու պարտեզները շարված են հաճախ առանց բաժանող պարսպի, և այս բոլորը սովորական բաներ են: Ես ինքս այս տեսակ պայմանների մեջ եմ ծնվել ու սնվել, իմ մանկությունս և պատանեկությունս անց եմ կացրել այդպիսի հանգամանքների մեջ»: Ինչպես տեսնում ենք, այս տողերից պարզ երևում է Բաշինջաղյանի անկեղծ սերն ու հարգանքը դեպի վրաց ժողովուրդը: Եվ նրա այդ սերը վերացական չէ, այլ արտահայտվել է նրա ամբողջ ստեղծագործության մեջ:

Դեռ 1889 թ. Բաշինջաղյանը նկարել է մի մեծ կտավ, որը պատկերել է անմահ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու «Վագրենավորից» մի էպիգոգ: Վրացական Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Իոսիֆ Գրիշաշվիլին այդ նկարի մասին գրում է.

«Հայոց ականավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը նկարեց մի մի-



չադեպ Շոթայի «Վագրենավորից», երբ Ֆաթմա խանումը պատուհանը բաց է անում, նայում դեպի ծովը, որտեղից աղոտ կերպով նկատվում է ինչ-որ բան, որը լող է տալիս ծովի մեջ: Բաշինջաղյանը որպես հայտնի պեյզաժիստ, ընտրել է համապատասխան պատկեր, որի մեջ պահպանված է «նովրոզի օրվա» երեկոյան աղջամուղջը, Ֆաթմայի դեմքի մոայտլովյունը, այգու սալահատակված արահետը և սոճիներով շրջապատված՝ Ֆաթմայի տունը, որը արևելյան ոճով է կառուցված: Բաշինջաղյանը սղնախեցի հայ է, բայց վրաց հին գրականությունը այնպես լավ գիտի, որ շատ վրացիներ ուղղակի պետք է ընդօրինակեն նրան»:

Ավելի ուշ, 1948 թ. Հայկական և Վրացական Գիտությունների ակադեմիաների նրկանում կայացած միացյալ սեսիայում Գրիշաշվիլին իր գեկուցման մեջ ընդգծեց, որ «Նշանավոր հայ նկարիչ Բաշինջաղյանը վրացական ժողովրդի մեջ վայելում է մեծ սեր ու հարգանք: Նրա վրձնին են պատկանում անմահ Ռուսթավելու գործերից վերցրած մի շարք պատկերներ»:

Վերոհիշյալ տողերը վկայում են ոչ միայն այն մասին, որ Բաշինջաղյանը քաջ ծանոթ լինելով վրաց լեզվին ու գրականությանը, ոգեշնչվել և պատկերել է դրվագներ անմահ Շոթայի գլուխգործոցներից, այլև այն, որ Բաշինջաղյանը բացի պեյզաժներից նկարել է և կոմպոզիցիոն կտավներ, որոշ կոնկրետ թեմաներով: Այսպիսով, մեզ հայտնի մի շարք կոմպոզիցիոն ֆիգուրալ կտավների հետ միաժամանակ, որոնցից իր բովանդակությամբ ուշագրություն արժանի է «Հայ գաղթականները 1828 թ.», Բաշինջաղյանը ունեցել է նաև այլ գործեր, որոնք մեզ չեն հասել:

Հետաքրքիր է վերոհիշյալ «Հայ գաղթականները 1828 թ.» կտավը, որը պատկերում է նրևանի գրավումից հետո Պարսկաստանի ծանր լծից ու տառապանքներից փախչող և դեպի Ռուսաստան, համեմատաբար ավելի բարվոք կյանքի ձգտող աշխատավոր ժողովրդի վիճակը: Նրանում նկարագրված է, թե ինչպես ողա դիմորների հսկողությամբ, հայ գաղթող աշխատավորները գիշերը օթևանում են սահմանամերձ վայրում: Այս ու այն կողմ վրաններ են խփված: Մի քանի տեղ խարույկներ են վառվում: Մի աշխատավոր ընտանիք, գրեթե ցնցոտիների մեջ, խարույկի շուրջը նստած մտաբերում է անցյալ տառապալի կյանքը և երազում գալիքի մասին: Նկարում ստեղծված է գունալին բարդ հակադրություն. ֆիգուրները լուսավորված են մի կողմից՝ խարույկի լույսի

անդրադարձումով, մյուս կողմից՝ լուսնի կոնտրաստային լուսավորությունամբ:

Հայերի և Անդրկովկասում բնակվող մյուս ժողովուրդների ծանր վիճակով ապրող Բաշինջաղյանին լավ է բնորոշում 1882 թվականին «Մեղու Հայաստանի» մեջ տպագրված մի թղթակցություն, որը հայտնում է, թե «...Գ. Բաշինջաղյանը առաջին հաջողություններից հետո, հասարակության խնդրանք, երկրորդ անգամ ներկայացրեց բարեգործական նպատակով, կենդանի պատկերներ՝ Սափարյանի դահլիճում: Հայտնի կյանքից ներկայացրեց 3 պատկեր, 9 տեսարաններով. «Շուշանիկը», «Սովը Հայաստանում», «Տաճկահայոց դրությունը». վրաց կյանքից՝ 3 պատկերներ 10 տեսարաններով. «Այծմյան հովիտի դրությունը», «Արսենի կյանքը», ուսաց կյանքից մի պատկեր՝ «Ռուս հասարակ դասի կյանքից»:

Թղթակցության մեջ հիշատակված կենդանի պատկերների թեմաները խոսում են այն ազդեցության մասին, որ Բաշինջաղյանը կրել է պերեպլիժնիկներից՝ ժողովրդի ծանր կյանքը պատկերելու և ճշմարտագույնությունը հենց իրեն՝ ժողովրդին հաղորդելու հարցում: Նա այդ մշտականությունը հենց իրեն՝ ժողովրդին հաղորդելու հարցում: Նա այդ մշտականությունը հենց իրեն՝ ժողովրդին հաղորդելու հարցում: Նա այդ մշտականությունը հենց իրեն՝ ժողովրդին հաղորդելու հարցում:

Եվ ընդհակառակը, դեմոկրատ նկարչին երբեք չեն զբաղեցրել հայ բուրժուանների ամառանոցները և ապարանքները: Դրա փոխարեն նա ոգևորվել ու անհուն սիրով նկարել է մեծ լուսավորիչ «Խաչատուր Աբովյանի տնակը Քանաքեռում», ուսուցիչներ-դեմոկրատ «Միքայել Նալբանդյանի տունը Նոր Նախիջևանում», հայ գրերի ստեղծող «Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Օշականում» կտավները, որոնք մինչև այսօր էլ անգերազանցելի են:

Բաշինջաղյանը խոշոր երկրպագու էր նաև ողա կլասիկ գրականության, որն արտահայտվել է նրա մի քանի աշխատություններում: Նա յուզանկար կտավով իլլուստրացիայի է ենթարկել կերմոնտովի «Վայրի հյուսիսում» բանաստեղծությունը: Հայտնի է նաև նկարիչ «Յասնայա Պոլյանայում» նկարը, որտեղ պատկերված է Լ. Ն. Տոլստոյի կերպարը:

Այսպիսով, Բաշինջաղյանը հանդես է գալիս որպես բազմակողմաբար տաղանդի և հնարավորությունների տեր, աշխատավոր ժողովրդի հետ սերտորեն կապված, նրա առաջավոր ներկայացուցիչների գաղափարների համախոհ, ժողովրդական լայն զանգվածների կողմից սիրված ու հարգված նկարիչ:

Բաշինջաղյանը որպես բնության երգիչ իր ունեցած ապրումներն ու հիացմունքը դեպի հայրենի բնությունը արտահայտել է բազմաթիվ պեյզաժներով: Նա բնությունը նկարել է մեծ մասամբ տեղում, բնության ձոցում և երբեմն էլ հիշողությամբ վերարտագրել արվեստանոցում:

Նրա յուրաքանչյուր գործի հիմքը, լինի մեծ կտավ, թե էտյուդ, կազմում է բովանդակալից տրամադրությամբ պեյզաժ-պատկերի ռեալիստական սկզբունքը: Անգամ նրա ամենափոքր էտյուդն ունի պատկերի բոլոր հատկանիշները և կառուցվածքը: Իմպրեսիոնիստական էտյուդային նկարչության հակառակ, ռեալիստական պեյզաժի այս մոտեցումը բնորոշ է Բաշինջաղյանի արվեստին և հանդիսանում է մեր նկարչության կլասիկ ժառանգությունը:

Ռուսական ռեալիստական պեյզաժային արվեստի բարերար ազդեցությամբ Բաշինջաղյանը այդ սկզբունքները սկսում է կիրառել դեռևս 1882—83 թվականներից: Նրա առաջին շրջանի աշխատությունների շարքին է պատկանում «Գեղամա լիճը լուսնյակ գիշերին» 1883 թվականի հետաքրքիր գործը: Այդ նկարում պատկերված է Յամաքարերը լուսնյակ գիշերին. հեռվում՝ Սևանա կղզին, ձկնորսների նավակն իր լույսով, ափին՝ գյուղական խրճիթներն աթարի դեղերով, ժայռերի վրա՝ խարույկի շուրջ բոլորել են ձկնորսները: Կտավի գյուղական պարզությունը, գիշերային անդորրը, ձկնորսների աշխատանքը, գոնային մեղմ գամման, նրբութունը նկարը դարձնում են բովանդակալից և յուրահատուկ:

Դժվար է ժամանակագրական կարգով ծանոթացնել նկարչի բոլոր ստեղծագործություններին և նկարագրել նրանց բովանդակությունը: Մենք կաշխատենք միայն խմբավորել և տալ նրանց համառոտ բնութագրերը:

Բաշինջաղյանի սիրած պահերից է «առավոտը» արևածագի վարդագույն դամմայով, դաշտավայրերի կապտագույն մշուշով, արևի շողերով պսակված սարերի գագաթներով, օդի թարմությամբ և լայնատարած հեռունեքով: Այդ կարգի աշխատություններից լավագույններն են՝ «Կենչիները արշալույսին», «Կագբեկը», ուր լեռան ձյունափայլ գագաթին դիպել են արևի առաջին ճառագայթները, դեռևս ստվերի մեջ թողնելով խոր կիրճը: Գեղեցիկ են նաև «Քուռ գետը» և «Արագանի հովիտը առա-

վոսյան» նկարները: Ալաղանի հովիտը և դաշտավայրը միշտ էլ հմայել են նկարչին՝ օրվա տարբեր ժամերին և տարվա տարբեր եղանակներին:

«Արևի վերջին շողերը». այս անունը նա տվել է իր մի շարք նկարներին: Դա օրվա այն խաղաղ ժամն է, երբ բնությունը ողողվում է լույսի և գույների բազմաթիվ երանգներով: Բաշինջաղյանի վերջալույսի նկարները հագեցված են կապտա-մանիշակագույն լեռնաշղթաների հեռունեքով, սարերի գագաթին ընկած վերջին դեղնանարնջագույն շողերով, առաջին պլանում տրվող հերկած արտերի մուժ ու լայն շերտերով: Այդպիսին են «Սևանը վերջալույսին», «Արարատը մայրամուտին» նկարները և բազմաթիվ այլ գործեր:

Անշափ զմայլել են նկարչի լուսնյակ գիշերները: Նրանց մեջ արտահայտված են բանաստեղծական նուրբ ճաշակի ու հոգու տեր արվեստագետի տրամադրությունները: Բաշինջաղյանի լուսնյակ գիշերը, այդ ամենից առաջ լուսնի արծաթափայլ շողերի խաղերն են ջրերի հետ և լուսնի լույսի մեղմ ծփանքը՝ ծովի կամ լճակի մակերեսին: Գիշերային պեյզաժները նկարչի լավագույն գործերի շարքին են պատկանում: Անպեյզաժները նկարչի լավագույն գործերի շարքին են պատկանում: Անմոռանալի տպավորություն է թողնում «Լուսնյակը Քուռ գետի վրա» կտավը: Պեյզաժի երկու կողմերում նկարված են գետի ափերը, մեջտեղից անցնում է Քուռը, իսկ մեղմ ամպերի տակից երևացող լուսնի արծաթափայլ շողերը խաղում են ջրի վրա: Նկարն իր գիշերային գունային գամմայով հարուստ է և հագեցված գեղանկարչական նուրբ տոներով: Այդպիսի բարձր վարպետությամբ են նկարված նաև «Սևանա լիճը լուսնյակ գիշերին», «Թբիլիսին գիշերը», «Ցիենվալը լուսնյակ գիշերին» և այլ պատկերներ:

Մեծ արվեստագետն իր ճանապարհորդությունների ընթացքում նկարել է բազմաթիվ մեծ ու փոքր կտավներ: Փարիզի շրջակայքում՝ Մեգոնում, կատարած փոքր չափի մի քանի պեյզաժները իրենց պարզությամբ, գեղարվեստական բարձր արժանիքներով վարպետի վրձնին հասուկ գեղանկարչական գոհարներ են:

Բաշինջաղյանը որպես ռեալիստ նկարիչ, ինչպես վերևում ասացինք, ունեցել է իր ամուր և անխախտ տեսակետներն ու համոզմունքները: Սակայն այդ շեր խանգարում, որ քսաներորդ դարի առաջին քսանամյակում հայ նկարիչներից ոմանք, ընկնելով ֆորմալիստական

հոսանքների ազդեցության տակ, պայքար սկսեին Բաշինջաղյանի ռեա-  
կիստական արվեստի դեմ:

Ենելով ստեղծված դրուժյունից և հայ կերպարվեստի կենսական  
շահերից, Բաշինջաղյանը 1916 թվականին գրում է մի քանի հոգված,  
որտեղ պարզաբանելով ֆորմալիստական անկումային արվեստի ռեակ-  
ցիոն էությունը, որպես ռեակիստ, մի շարք խորհուրդներ է տալիս երի-  
տասարդ նկարիչներին: Այդ մտքերը մինչև օրս էլ իրենց թարմությունը  
չեն կորցրել: Ահա դրանցից մի քանիսը. «Պարտքս եմ համարում մի  
փոքր անհանգստացնել երիտասարդ նկարիչներին, հայտնելով իմ կար-  
ծիքը արվեստի մասին: Նրանցից ոմանք, ըստ երևույթին, ուղեղները  
ծանրաբեռնած ճորտ տեսակետներով», ընթանում են կեղծ ուղիով, որը  
տանում է դեպի կործանում: Այդ խնդրում տեղի դեր են կատարում  
գրական կասկածելի անկեղծության տեր գրախոսներից ոմանք: Դրանք,  
անվանարկելով այն ամենը, ինչ ստեղծել են մինչև այժմ արվեստի խո-  
շորագույն վարպետները, վառ գույներով նկարագրում են անարվեստ այդ  
ցնդաբանությունները, հավատացնելով ընթերցող հասարակությանը,  
որ նման անհեթեթություններն իսկական արվեստի ստեղծագործունե-  
ներ են, մատչելի միայն ապագա, մոտ 200 տարի հետո հանդես եկող  
սերնդին...

...Մեզ մոտ, ընդհանրապես Ռուսաստանում, և մասնավորապես  
Կովկասում, գեղանկարչական այս նորությունը, որը եկել է, ինչպես և  
յուրաքանչյուր մոդա՝ արևմուտքից, ընդունեց ամենահրեշտավոր ձևեր:  
Նա գտավ մեզ մոտ համապատասխան միջավայր, դեպի իրեն հրա-  
պուրելով թեթևամիտ և ծուլ տղետներին: Մեքենայորեն կրկնած այն  
դատարկաբանությունը, թե «Մեր արվեստը ապագայի արվեստ է, այն  
հասկանալի կլինի 200 տարի հետո», չափազանց շահավետ է յուրա-  
քանչյուր դատարկապորտի, որը երազում է առանց աշխատանքի և ըն-  
դունակությունների նկարչի համբավ ձեռք բերել: Իհարկե, ժամանակին  
այդ բոլորը կանհետանա երկրի երեսից, սակայն ցավալի է տեսնել, թե  
ինչպես մեր ժամանակ ապագա խոստացող շատ երիտասարդ ուժեր,  
ուրիշ անպետք թափթիռվածների հետ մեկտեղ տարվում են այդ անառողջ  
ալիքով: Եվ մի շարք սուր դիտողություններից հետո, նա շարունակում  
է. «Մեկայինի «Ռուսականները», «Ձապորոժցիները» և «Հովնան ահեղը»  
հրաշալի կտավներ են, որոնք արտացոլում են հեղինակի դեպի առար-  
կան ցուցաբերած միտքը, բնավորությունը, զգացմունքներն ու տեսա-

կետները: Այստեղ բոլորը իրագործված է իրականության օրենքների  
սահմաններում: Հիշյալ նկարները, ինչպես բաց գրքի էջեր, հասկանալի  
են յուրաքանչյուր գրագետ, կուլտուրական մարդու համար»:

Կարծում ենք, որ ամեն ինչ ասված է պարզորեն. պերեդվիժնիկների  
դպրոցն անցած արվեստագետը այլ կերպ էլ չէր կարող մտածել ու գոր-  
ծել: Բաշինջաղյանը ոչ միայն նամակ է ուղարկել երիտասարդությանը  
կամ եղել նրա խորհրդատուն, այլև միշտ գործնական օգնություն է  
ցույց տվել նրան: Շատ բնորոշ է երիտասարդ նկարիչ Սարգիս Խա-  
չատրյանի նամակը ուղղված Բաշինջաղյանին, որտեղ խոսվում է նաև  
Բաշինջաղյանի հակառակորդների մասին:

«Անցյալ օրվա միջադեպից ի վեր,— գրում է Խաչատրյանը,—  
խիղճս սոսկալի կերպով դիս կտանջե. ինձ երբեք չեմ ներել բազմաշ-  
խատ արտիստի հետ այսպես վարվել, մանավանդ ինձ համար աններելի  
հանցանք է, քանի որ առաջին առթիվ իսկ ինձ սիրալիր վերաբերմունք  
ցույց տվիք: Պիտի խնդրեի Ձեզանից, որ ներող լինեք երիտասարդա-  
կան խոռվանքիս: Ձեր թշնամիները հենց այդ օրից ինձ հետ սկսան  
բարեկամանալ... և այլն»:

Ռեակիստ արվեստագետ Բաշինջաղյանի պայքարը հակաժողովրդ-  
դական, ֆորմալիստական, բուրժուական արվեստի և նրա ներկայա-  
ցուցիչների դեմ՝ չափազանց հարազատ է մեր արվեստին և առանձնա-  
պես զնահատելի, մանավանդ նրա այն միտքը, թե ճշմարտությունը հա-  
րազատ քույրեր հանդիսացող արվեստի և գրականության մայրն է:

Մենք սկզբում նշեցինք, որ Բաշինջաղյանն իր գործունեությունը  
չի սահմանափակել միայն նկարչությամբ. նա եղել է հասարակական  
գործիչ, բանասեր, աչքի է ընկել իր գրական աշխատություններով,  
նույնիսկ դերասանական հակումներով:

Ակադեմիայում սովորելու տարիներին նա հաճախ հանդես է եկել  
ուսանողական ինքնագործ ներկայացումներում, իսկ Սունդուկյանի  
«Պեպո» պիեսի Գիքոյի դերում, անզուգական է եղել: Գերասանությունից  
բացի Բաշինջաղյանը հաճախ էլ ուսանողական Հայրենակցական միու-  
թյան կողմից կազմակերպած ներկայացումներին մասնակցել է որպես  
նկարիչ-ձևավորող:

Գրականությունը եղել է նրա երկրորդ մշտական զբաղմունքը:  
Սկսած 1880-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը, նա գրել է  
պատմվածքներ, հիշողություններ, տպավորություններ և այլ բնույթի

գրական գործեր: նկարչի գրական ժառանգությունում մենք հանդիպում ենք նաև պետերբուրգյան ուսանողական կյանքից «Ուսանողներ» անունով մի պիեսի:

Նրա «Հիշողություններ նկարչի կյանքից» գրքույկը հրատարակվել է Պետերբուրգում, 1903 թ.: Այդ գրքույկի մեջ ամփոփված են Բաշինջաղյանի ճանապարհորդական նոթերը, բնության սքանչելի նկարագրությունները և նկարչի հույզերն ու ապրումները:

Մեր գրականության մեջ Բաշինջաղյանի հիշողություններն իրենց առանձնահատկությամբ և բանաստեղծական արձակով գրավում են ուրույն և արժեքավոր տեղ: Հիշողությունները կարողալիս, ընթերցողի համար առավել պարզ է լինում բնությունը անհունորեն սիրող արվեստագետի ողջ էությունը, նրա նրբին ճաշակը, նկարչին հատուկ սուր գիտողականությունը և տպավորական ուժեղ հիշողությունը:

Բաշինջաղյանը մի շարք պատմվածքներ է գրել նաև աշխատավոր դասի, գաղթականների, մանուկների կյանքից, ինչպես նաև պորտաբույծ կարվածատերերի կենցաղից: Նրա պատմվածքները գրված են ռեալիստական սուր գիտողականությամբ և անկեղծությամբ: Իրանք ճշմարիտ են, հուզական, անմիջական: Պատմվածքներից առանձնապես արժեքավոր են «Ձեռնածու Աբելը», «Վրացի Իվանեն», «Գաղթական մանուկները», «Հիասթափումը», «Ազնվականի հիշատակարանից» և այլն:

«Ձեռնածու Աբելը» պատմվածքում հեղինակը խոր ռեալիզմով պատկերում է աղքատ դասի վիճակը, գավառական քաղաքի սովորություններն ու միջավայրը, և սովի ճիրաններում տանջվող «անբախտ մարդկանց» անխուսափելի մահը: «Վրացի Իվանեն» պատմվածքում նկարագրվում է աշխատավորի շարժաշ կյանքը, որ շոր հացի համար ապարդյուն քրտինք է թափում: Իվանեն մի տարի անընդհատ աշխատում է կարվածատերի մոտ, որպեսզի իր հասանելիք վարձը ստանա և կերակրի սովի մատնված երեխաներին, բայց այդ էլ չի ստանում և ձեռնունայն վերադառնում է տուն: Երեխաների լացն ու ընտանիքի վիճակը նրան՝ հողի մշակին, մղում են անազնիվ գործի: Սակայն առաջին իսկ օրվան բռնվում է և պատժվում, կորցնելով իր պատիվն ու ընտանիքը: Բաշինջաղյանն այդ պատմվածքում վեր է հանում կարվածատիրական միջավայրի դաժանությունն ու հակասությունները, աշխատավոր գյուղացիության սովի, աղքատության և հուսահատության մատնված կյանքը:

Հետաքրքիր են նաև նրա բանասիրական աշխատությունները, որոնցից արժեքավոր է Սայաթ-Նովային նվիրված ուսումնասիրությունը: Մեծանուն նկարիչը լիովին տիրապետելով հայ, վրացական և ադրբեջանական լեզուներին և անհունորեն սիրելով մեծ բանաստեղծ ու գրական Սայաթ-Նովային, երկար տարիներ զբաղվել է ժողովրդական երգչի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությամբ: Բացառիկ հիշողության տեր արվեստագետը անգիր գիտեր Սայաթ-Նովայի երգերի մեծ մասը և դրանք արտասանում էր հայերեն, վրացերեն ու ադրբեջաներեն: Նա էր, որ Գևորգ Հախվերդյանից հետո, մինչև իր կյանքի վերջին տարին զբաղվեց Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն երգերի ուսումնասիրություններով ու նոր մոտեցումներ արեց սայաթնովայագիտության մեջ: Միաժամանակ նա հաճախ հանդես էր գալիս մամուլում և խրախուսում ամեն կերպ զբաղվել մեծ երգչի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությամբ:

Սայաթ-Նովայի թողած Բագրատը, նկատի ունենալով Բաշինջաղյանի սերն ու ծառայությունները հանդես էր մեծատաղանդ պապը, առաջինը նրան է հանձնում Սայաթ-Նովայի երգերի հայերեն ձեռագիրը: Իբրև մահից մի տարի առաջ, Բաշինջաղյանը դարձյալ հանդես է գալիս մամուլում, առաջարկելով ադրբեջաներեն լեզվով հրատարակել Սայաթ-Նովայի երգերը:

1926 թվականին «Սովետական Հայաստան» թերթում կենսագրում է «Տասնևութերորդ դարի հռչակավոր երգիչը պարզապես նրա (Բաշինջաղյանի — խմբ.) սրբության սրբոցն էր: Կարող եմ ասել, որ նրա նման հեղինակավոր մի տայաթնովայագետ չկա հայերի մեջ: Նա էր, որ առաջին անգամ ծանոթացրեց մեզ Սայաթ-Նովայի վրացերեն բանաստեղծություններին և միանգամայն նոր, ընդարձակ լուսաբանություններ մտցրեց մեր հասկացողությունների մեջ: Բաշինջաղյանն էր նույնպես, որ առաջին անգամ ցույց տվեց, թե վրացերեն ոտնավորների մեջ որքան թանկագին ինքնակենսագրական նյութեր է դրել Սայաթ-Նովան»:

Նախառևույցից շրջանում Գ. Բաշինջաղյանն առաջինը եղավ, որ մամուլում վճռական քայլ արեց հրատարակ հանելու բուրժուական ինտելիգենցիայի կողմից մոռացության մատնված մեծատաղանդ բանաստեղծ, հայ, վրացի և ադրբեջանական ժողովուրդների կողմից սիրված ու հարգված Սայաթ-Նովային:

Այս նպատակով Գ. Բաշինջաղյանը 1912 թ. «Մշակ» լրագրում ներքեք հիշատակված առանձին կոչով դիմել է հայ ժողովրդին:

«Սայաթ-Նովա

Կոչ հայ ժողովրդին:

Մի մեծ և հին պարտք կա հայ ժողովրդի վրա, որը մոռացութեան է տրված, և որը, սակայն, երբեք չի մոռացվելու: Ո՞վ չի լսել աննման ժողովրդական բանաստեղծ Սայաթ-Նովայի անունը, ո՞վ չի հիացել ու զմայլվել նրա հանճարեղ երգերով և ո՞վ կարող է ունենալ նրա հսկայական ծառայությունը հայ ժողովրդական լիրիկ բանաստեղծության մեջ: Աշուղներ, երգիչներ շատ են եղել, ինչպես Շիրին, Սեյադ, Քյուչուկ-Նովա, Միսկին-Բուրջի, Չամչի-Մելքոն, Թուրինջ, Աղբար-Աղամ, Քյուրջի-Օղլան, Նարգիզ, Լազաթ-Օղլան, Քյուրջի-Նավե և այլն: Դեռ այսօր էլ կան Սկանդար-Նովայի և Հազիբի նման երգիչներ, որոնք ունեն իրենց երկրպագուները ժողովրդի մեջ, սակայն Սայաթ-Նովան նրանց մեջ մի այնպիսի աժդահա է, որի սովերի մեջ բոլորեքյան գունատվում են:

Բայց այս անզուգական պոետը մոռացված է: Մոռացված է այն մտքով, որ նրա ո՛չ մահվան հարյուրամյակն է հարգված, ո՛չ երբեկից նրա հոգեհանգիստն է կատարված, ո՛չ (ամոթ է խոստովանել) նրա գերեզմանի վրա որևէ նշան դրված...

...Եկեք մաքրենք մեր մտքերը, նամանավանդ որ շատ հեշտ է այդ: Եկեք մի մահարձան թեկուզ, մի տապանաքար դնենք նրա գերեզմանի վրա: Հոգ չէ, թող այդ քարը լինի պարզ, էժանագին, միայն թե լինի այդ իրագործված ժողովրդի կուպեկներով:

Հավատացած եմ, որ այս կոչը կարտատպե ամեն մի հայ թերթ և սրբախոթյամբ կընդունի յուրաքանչյուրի լուման, որքան էլ աննշան լինի նա իր քանակությամբ...»<sup>1</sup>:

Այս կոչն ապացույց կարող է ծառայել, թե Սայաթ-Նովայի հիշատակը հավերժացնելու և նրա գերեզմանի վրա հուշարձան կառուցելու համար մամուլում ամենավճռական կերպով հանդես եկող Բաշինջաղյանը ինչպես բարձր էր գնահատում Սայաթ-Նովային:

Սակայն մեզ անհասկանալի պատճառներով մեր գրականագետները

<sup>1</sup> Կոչը տպագրվեց «Մշակ» լրագրի մեջ և, ինչպես երևում է, արտատպվել է «Նաթաբալայից» (1912 թ. № 45, 17/11, էջ 535):

և առհասարակ հայ մամուլի աշխատողները Գ. Բաշինջաղյանի վերոհիշյալ կոչը մոռացության են մատնում: Օգնության է գալիս մեծ թուժանյանը և իր մի շարք հոդվածներով ու եռանդուն գործունեությամբ մանյանը և իր մի շարք հոդվածներով ու եռանդուն գործունեությամբ հաջողեցնում Սայաթ-Նովայի շիրիմի կառուցումը, որ Բաշինջաղյանի մշակած նախագծի համաձայն ի վերջո հիմնվում է Թիֆլիսի (Մայրամբում) Ս. Գևորգ եկեղեցու գավթում: 1920 թ. Ի. Գրիշաշվիլու խմբագրությամբ և Գ. Բաշինջաղյանի մոտիկ մասնակցությամբ վրացերեն լեզվով հրատարակվում է Սայաթ-Նովայի երգերի ժողովածուն, որից հետո Գ. Բաշինջաղյանն այդ ժողովածուի վերաբերյալ «Մշակ»-ում գետեղում է մի հոդված, շեշտելով, որ այդ ժողովածուն իր ժամանակին հանդիսացել է մեր իրականության համար կուլտուրական մեծ երևույթ: Այդ ժողովածուի նախաբանում Ի. Գրիշաշվիլին մեծ երախտագիտությամբ հիշատակում է Գ. Բաշինջաղյանի մատուցած հմուտ օժանդակությունը: Գ. Բաշինջաղյանը դրանով չի բավարարվում. նա ձգտում է Սայաթ-Նովայի երգերը լայն զանգվածների սեփականությունը դարձնելու համար դիմել կոնկրետ ու վճռական միջոցների: Այդ նպատակով իր մոտ է հավաքում Թիֆլիսի աշուղներին և տալով նրանց Սայաթ-Նովայի երգերի տեքստերը, հարկադրում է ուսումնասիրել ու երգել: 1922—1924 թթ. կազմակերպում է Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված մի շարք գրական-երաժշտական երեկոներ և այդ երեկույթներին մասնակցելու համար հրավիրում ժողովրդական հայտնի երգիչներին ու երաժիշտներին:

Այսպիսով, նա մինչև իր կյանքի վերջը մնաց որպես նվիրված սայաթնովայագետ և իր ցանկությամբ էլ այժմ հանգչում է Սայաթ-Նովայի գերեզմանի կողքին:

Նկարչի որդին՝ Ջաքար Բաշինջաղյանը, հոր մահվան 20-ամյակի առթիվ գրած իր հոդվածը վերջացնում է հետևյալ տողերով.

«Գևորգ Բաշինջաղյանը, ըստ իր ցանկության, թաղված է Սայաթ-Նովայի գերեզմանի կողքին: Բաց գերեզմանի առաջ սրտատուչ ճառասաց Գրիշաշվիլին, իսկ Սաշա Օգանեզաշվիլին կուսակալով դազարի վրա՝ նվագեց հանգուցյալի ամենասիրած երգերից մեկը՝ Սայաթ-Նովայի «Դու՛մ էն գլխեն իմաստուն իս»: Այսպես ահա մեծ գուսանի ստեղծագործությունը ուղեկցեց տաղանդավոր նկարչին և ականավոր հասարակական գործչին մինչև վերջին րոպեները:

Գևորգ Բաշինջաղյանը որպես առաջավոր գործիչ և մտավորական,

բարեկամութիւնն ու մտերմութիւնն է ունեցել մեր ժողովրդի պարծանքներ՝ Հովհաննէս Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Ալեքսանդր Մատուռյանի, Վրթանէս Փափաղյանի, Կոմիտասի, Ավետիք Իսահակյանի, Եղիշէ Թադևոսյանի, Փանոս Թերլեմեզյանի նման մեծատաղանդ մարդկանց հետ:

Հանճարեղ Թումանյանը իր ընկերոջը՝ տաղանդավոր նկարչին «Ձորագետը գիշերով» նկարի առթիվ նվիրել է հետևյալ բանաստեղծութիւնը.

Արտիստ քաջարի, այս ձորն ահարկու  
Յուր բնակավայրից փոխադրել ես դու,  
Մեծ է արդարև, մեծ է քո հոգին,  
Որ ընդգրկել է ժայռերն ահագին,  
Իրենց սեփական խոր մտածմունքով,  
Փրփրուն գետը փայլուն ծփանքով,  
Լուսինն աստղերով, կամարը երկնի  
Եվ համատարած խավարն ահռելի...  
Լուս հանգստութեան գիշեր է մթին,  
Հանգստանում է նաև իմ հոգին:  
Բայց ահա այնտեղ ձորի խորքերում  
Մի մենակ վառվող լույս է երևում,  
Այո, մի խուղ կա այն ձորի միջին,  
Դու ճանաչում ես նրա բնակչին...  
Օ՛հ, շեւ ճանաչում, անծանոթ ես դու,  
Բայց թե գիշերը և նրա հոգում  
Կարողանայիր տեսնել և զգալ՝  
Հանգստութեան շէր նայողին դու տալ:

Բաշինջաղյանի նկարների հմայքը ոգեշնչել է նաև Ալեքսանդր Մատուռյանին, որը նույնպես նրան է նվիրել իր «Պատկեր» բանաստեղծութիւնը:

Պ Ա Տ Կ Ե Ր

(Նվեր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանին)

Խորին գիշեր է: Կանգնած, վաստակած  
Երկիրը, որպէս քրտնաջան մշակ,  
Քսած է անդորր, ասես մոռացած  
Ցերեկվա անվերջ հոգսերն ու տանջանք...

Եվ չի վրդովում ոչ մի արարած  
Մայր-երկրի այս մեղմ նինջը անսշիկ,  
Խաղաղութիւնն է շորս կողմը տիրած —  
Լուս է բնութիւն, լուս է և երկինք:

Եվ աստղազարդ պայծառ եթերում  
Հանդարտ լողում է նազելի լուսին  
Եվ բուռն սիրո հուրը աչերում —  
Օրոր է կարգում քաղցրանինջ երկրին:

Անվանի մարդկանց սերտ և անկեղծ մտերմութեան ու նրանց ջերմ հարաբերութիւնների մասին հետաքրքիր հիշողութիւններ ունի մեր վարպետը՝ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: Գ. Բաշինջաղյանի մահվան 15-ամյակի առթիվ նա «Գրական թերթ»-ի 1940 թ. սեպտեմբերի 30-ի համարում զետեղել է «Հուշեր նկարիչ Բաշինջաղյանի մասին», որից մենք մի փոքրիկ քաղվածք կբերենք. «Առաջին անգամ ես նրան տեսա 1896 թ. «Ճարագ-Աղբյուր»-ի խմբագրատանը: Ինձ իբրև մի երիտասարդ բանաստեղծի, ներկայացրին նրան. անունս չէր լսել:

Սակայն հետաքրքրվեց և ասաց. «Թերևս կարգացած կլինեմ Ձեր բանաստեղծութիւնները, բայց սրանից հետո հատկապես ուշագիւր կլինեմ»: Այդ ժամանակ նա արդեն հռչակ վայելող նկարիչ էր, բարձր գնահատանքի էին արժանացած նրա պեյզաժները, օրինակի համար «Զրնհալքը», «Ճարասիների անտառը», «Լեռնականները...»:

Մեր սերունդը հիացած էր նրա ստեղծագործութիւններով, և բաց չէինք թողնում նրա ցուցահանդեսները: Ինձ վրա շատ հմայիչ տպավորութիւն թողեց նա: Իր պեյզաժների խաղաղ, անդորր բանաստեղծութիւնը նրա դեմքի վրա էր: Մեղմ կանաչին և կապույտին տվող ծովի գույն աչքեր, գրավիչ ձայն, կիրթ շարժումներ:

Հետագա տարիներում մի քանի անգամ պատահել եմ նրան Հովհ. Թումանյանի տանը: Հիացած լսում էի նրա ճանապարհորդութիւնների պատմութիւնները: Ո՛ւր չէր եղել նա — Եվրոպա, Ռուսաստան... մանավանդ շատ լավ ճանաչում էր նա Իտալիան, Փարիզը: Գրեթե անգիր պիտեր Հոռմի, Յուրենցիայի, Վենետիկի, Լուվրի թանգարանների գեղարվեստական սքանչելիքները:

Նա, ուղղակի, նկարում էր խոսքերով իր տեսածները: Հիշում եմ Զանգեզուրի և Կարաբաղի՝ նրա նկարագրութիւնները, — ինձ թվում էր, թե ես շոշափելի տեսնում եմ նրա շրջագայած վայրերը. այնտեղների

երկնքի ամպերի գույներն ու երանգները, նրանց անհեթեթ և շքեղ ձևերը. դրո՞ւմ էի ժայռերը, դաշտերը, հողը:

Նա, ինչպես հայտնի է, գրում էր պատմվածքներ, տպավորություններ, հուշեր, որոնք գրված նկարներ են, սակայն իր կենդանի խոսքը շատ և շատ առինքնող էր...»:

Բաշինջաղյանի արվեստանոցում, որտեղից մեզ հասել են նկարչական արվեստի գոհարներ, հնչել են նաև Թումանյանի, Աղայանի, Փափաղյանի, Իսահակյանի խոսքն ու ծիծաղը և մեծ կոմպոզիտոր ու երաժիշտ Կոմիտասի թովիչ երգն ու ձայնը:

Գ. Բաշինջաղյանը մեծ սեր էր տածում ոչ միայն դեպի հայ գրականությունը, այլև մյուս ժողովուրդների արվեստն ու գրականությունը: Նա իր ազատ ժամերը միշտ նվիրում էր ընթերցանությանը: Ռուս գրողներից ամենից շատ սիրում էր Պուշկինին, Տուրգենևին, և Տոլստոյին, Լերմոնտովին և Չեխովին: Տուրգենևի երկերից նրա սեղանի վրա միշտ դրված էր «Որսորդի պատմվածքները»: Նրանում եղած բնության նկարագրությունները մեծ հիացմունք էին պատճառում նկարչին: Նա հիանում էր ոչ միայն Լերմոնտովի գրվածքներով, այլև այլազգի գրողների երկերի՝ նրա կատարած թարգմանություններով: Այս գործերի հիման վրա նա կատարել է մի քանի էսքիզներ ու մի մշակված կոմպոզիցիոն աշխատանք, որը 1916 թվականին ցուցադրել է Պետերբուրգի նկարիչների ընկերության պատկերասրահում, և մայրաքաղաքի մամուլի կողմից արժանացել է դրական գնահատականի:

Եվրոպական գրողներից Բաշինջաղյանն ամենից շատ սիրում էր ընթերցել Վ. Շեքսպիրի, Վ. Հյուգոյի, Ալֆոնս Դոդեի, Գի դը Մոպասանի գրվածքները: Շատ լավ տիրապետելով վրացական լեզվին, Գ. Բաշինջաղյանը համարյա ամբողջությամբ անգիր գիտեր Շոթա Ռուսթավելու «Ազգրենավորը» և ուսումնասիրել էր այնքան հմտորեն, որ վրացի գրողները շատ անգամ դիմում էին նրան պարզաբանելու պոեմի որոշ տեղերը: Իսկ հայ գրողներից ամենից շատ կարգում էր և սիրում Խաչատուր Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Բաֆթուն, Ալիշանին, Հով. Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Ա. Ծատուրյանին:

Գ. Բաշինջաղյանը ողջ կյանքում իր նկատմամբ եղել է շափազանց խստապահանջ: Խստապահանջ է եղել ոչ միայն ստեղծագործական խնդիրների, այլև հասարակական բնույթ կրող բազմապիսի սրտ-

տականությունների նկատմամբ, որոնք նա կատարում էր բարեխղճորեն և համբերատար կերպով:

Մեծ տենչ ունենալով խորանալու իր պաշտած արվեստի բնագավառում, իր համեստ բնավորության շնորհիվ, սիրով ու համբերատարությամբ նա լսում էր զանազան մարդկանց դիտողությունները իր ցուցադրած գործերի թերությունների մասին և աշխատում վերացնել դրանք իր հետագա ստեղծագործական աշխատանքներում:

Նրա համբավը, որպես տաղանդավոր պեյզաժիստի, թափանցել է Հայաստանի ամենահեռավոր անկյունները: Իր պարզ կերպարներով, ամենքին հասկանալի, գեղանկարչական մատչելի լեզվով, մեծ վարպետությամբ նա պատկերել է իր հայրենի բնության ամենաբնորոշ ու գեղատեսիլ տեսարանները:

Բաշինջաղյանը հայ իրականության մեջ ունեւիտական պեյզաժիստեղծողը, նրա նախահայրն է: Նա իր ելույթներով և մամուլում գրած հոդվածներով պայքարել է հակաժողովրդական ֆորմալիստական ուղղությունների դեմ, հօգուտ ունեւիտական արվեստի սկզբունքների հաստատման և ամրապնդման: Նա գործունյա օգնություն է ցույց տվել դժբախտ գաղթականությանը և իր կազմակերպած ցուցահանդեսների մուտքի գալի մասը տրամադրել այդ նպատակին: Վերջապես իր կազմակերպած բազմամյա և բազմաթիվ անհատական ու հավաքական ցուցահանդեսներով բարձրացրել է աշխատավոր ժողովրդի կուլտուրական մակարդակը:

Մահը միայն ընդհատեց անվանի նկարչի անսպառ եռանդով լի ստեղծագործական կյանքը: Նա վախճանվեց 1925 թվականի հոկտեմբերի 4-ին:

Գեորգ Բաշինջաղյանը թողել է գեղարվեստական հսկա մի ժառանգություն՝ երկու հազարից ավելի մեծադիր և փոքրադիր նկարներ, որոնք սպասում են դեռևս մեր արվեստաբանների ուշիմ և խորագույն ուսումնասիրությունը:

Այդ գործերը իրենց գեղարվեստական բարձր արժանիքներով, հայրենասիրական տրամադրությամբ՝ դիտողի մեջ անհուն սեր են զարթեցնում դեպի հայրենի բնությունը, դեպի հարազատ և սքանչելի վայրերը:

Գ. Բաշինջաղյանը համաժողովրդական համբավ վայելող նկարիչ է: Նրա արվեստին ծանոթ են այսօր ոչ միայն Անդրկովկասի աշխատ-

տավորությունը, այլև սովետական Միության ժողովուրդները, առանձնապես Մոսկվայի արվեստասեր հասարակությունն ու մամուլը, որ 1950 թվականին Գ. Բաշինջաղյանի աշխատությունների Մոսկվայում կազմակերպած ցուցահանդեսի առթիվ տվեցին իրենց բարձր գնահատականը:

Այսօր, երբ սովետահայ նկարչության առաջ դրված են մինչև 1917 թվականի շրջանի հայ կերպարվեստի ժառանգության գնահատման և օգտագործման կարևորագույն խնդիրները, մեր արվեստագետների և սովորող երիտասարդության համար ուսանելի է հայ ռեալիստական պեյզաժի հիմնադիր Գևորգ Բաշինջաղյանի ժառանգությունը: Նրա մեջ մենք տեսնում ենք ռուսական և հայ կլասիկ նկարչության հիմունքներն ու վարպետությունը, նրանց ռեալիստական սկզբունքներն ու գեղանկարչական բարձր կուլտուրան:

Գևորգ Բաշինջաղյանի թողած ժառանգությունը, կյանքի և բնության ճշմարտացի պատկերումով, օգնում է մեր արվեստի զարգացման ընդհանուր գործին:

Ավելի խոր ուսումնասիրենք, ուրեմն, Բաշինջաղյանի սքանչելի արվեստը, որպեսզի հարստացնենք մեր ծաղկող սովետական գեղանկարչությունը:


## Գ. ԲԱՇԻՆՋԱԳՅԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԻՑ








Կեչիների պուրակը



Մարտի 1900



Մարտի 1900



Utiarlujfi or Uluarfut



Uruurun



Արաղած



Փարիզի շրջակայքում



Կղզիկ



Սևաբլուրի Երզնկայի Մարզում




Գառնալը Պալուկ տեղում



Խ. Արովյանի տնակը Բանաճևում



Սևազի ձորով




Մարտունիի քաղաքում



2013

1- - - 2001



Պիշեր Թրքանախյով

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
32	8 վ.	ունենալ	ունենալ
32	15 ն.	մտքերը	մեղքերը
35	15 ն.	«Լեռնականները...»:	«Լեռնանկարները...»:

Պատվեր 1735



April 4

1888

---

5

120